Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

Սերեք
307

1 5/85.

Աստրախան

2 Ո 03

ԵՒՐԻՊԻԴԵԱՅ

# ԱՂԵՐՍԱՒՈՐՔ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ԶՈՐ Ի ՀԵԼԼԵՆ ԲՆԱԳՐԷՆ ՓՈԽԵԱՑ Ի ՄԵՐՍ

Հ. ԱՐՍԷՆ ՍՈՒՔՐԻ

Ի ՄԽԻԹ. ՈՒԽՏԷ

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

1881

904

կք 306.

307-2003

3760
41 գ

## ՊԱՏՃԱՌ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆՍ

Եւթանեքին իշխանք արգեանք անկեալ ընդ-պարսպօք Թեբայեցւոց, կային անթաղ։ Եւ քանզի աստուածավրէժ պատուհաս համարեալ էր յայն-ժամ արտաքոյ գերեզմանի մնալ դիականց, եւ միանգամայն նախատինք մեծ ընտանեացն, — վասն զի կարծէին հեթանոսքն՝ եթէ հոգիք անթաղ մարմնոց յածեալ թափառիցին ժամանակս ինչ զափամբք Ստիւքս գետոյն, — վասն այսորիկ մարք անկելոցն այնոցիկ եկին 'ի միասին առ Թեսեւս՝ Աթենացւոց թագաւոր, հայցել 'ի նմանէ թիկունս օգնականութեան 'ի թաղել զդիակունս, զի մի արտաքոյ շանց եւ գազանաց լինիցին կերակուր։ Այն ինչ նոցա հասեալ յԵլեւսինա՝ հանդիպէին մօր Թեսեւսի՝ Էթրայ, 'ի ժամանակի՝ յորժամ զոհ մա-տուցանէր Դեմետրեայ։ Կանայքս այսոքիկ՝ մարք անկելոցն 'ի Թեբէ, եւ որդիք նոցա՝ են անձինք պարուս. ուստի եւ զանունն ընկալաւ՝ Աղերսա-ւորք՝ ողբերգութիւնս այս Եւրիպիդեայ։

Թեսեւսի խոնարհեալ յաղաչանս նոցա՝ խընդրէ ՚ի Թեբայեցւոց զդիակունս եւթանցն այնոցիկ· եւ ՚ի նշկահել նոցա զհրամանն, խաղայ զօրու ՚ի վերայ նոցա· որոց ՚ի պարտութիւն մատնեալ յերեսաց Թեսեւսի՝ տան յետս զդիակունսն, զորս թափեալ նորա եւ մեծաւ շքով տայ թաղել։ Եւադնէ, անայր մնացեալ յեւթանց անտի ՚ի Կապանեայ, արկանէ զանձն ՚ի խարոյկ անդր առն իւրոյ։

Մեծաշուք էր հանդէս յուղարկաւորութեան, որպէս եւ ոճ ողբերգութեանս այսմիկ վկայէ· որով եւ յարգանք հնոցն հելլենացւոց վասն գերեզմանաց· զի Թեսեւս ինքնին կայ եւ պաշտպանէ զօրէնս շիրմաց։

Ողբերգութիւնս այս ընծայեցաւ ՚ի տեսարանի առ իշխանաւն Անտիփոնեաւ, չորեքհարիւր եւ ութեւտասն ամաւ յառաջ քան զՔրիստոս· յորժամ դեռ եւս ՚ի հաստոջ էր պատերազմն Պելոպոննեսայ, Արգիացիք եւ Լակեդեմոնացիք դաշն խաղաղութեան կռէին ընդ միմեանս, վասն որոյ եւ բազում ինչ զքաղաքային իրաց է տեսանել յողբերգութեանս աստ յայսմիկ։

## Ա Ն Ձ Ի Ն Ք

ԷԹՐԱ, *մայր Թեսեւսի·*
ՊԱՐ *արգիուհի կանանց·*
ԹԵՍԵՒՍ, *թագաւոր Աթենացւոց·*
ԱԴՐԱՍՏՈՍ, *աղաչաւոր առ Թեսեւս·*
ՔԱՐՈԶ·
ՀՐԵՇՏԱԿ·
ԵՒԱԴՆԷ, *կին Կապանեայ՝ միոյ յիշխանացն անկելոցն ՚ի Թեբէ·*
ԻՓԻՍ, *հայր Եւադնեայ կնոջն Կապանեայ·*
ՄԱՆՈՒԿ·
ԱԹԵՆԱՍ *աստուածուհի·*

*Հանդէս է յԷլեւսին, և պարն յարգիուհի կանանց, որ կորուսին զորդիս իւրեանց ՚ի Թեբէ։*

## ԷԹՐԱ, ՊԱՐ, ԱԴՐԱՍՏՈՍ, ԵՒ ԿԱՆԱՅՔ ԵՒ ՄԱՆԿՏԻ

### ԷԹՐԱ

Երկրիս Ելեւսինեայ դու պահապան Դեմետրէ ,
Եւ որ կայք 'ի տաճարս ըսպասաւորք դիցուհւոյն ,
Թեսեւսեայ իմոյ որդւոյս և ինձ նըպաստ եղերուք ,
Քաղաքիս ևս Աթենայ , և աշխարհին Պիտթէայ ,
Յորում զիս 'ի բարերաստ կայանս սընոյց և զըզուեաց ·
Պատգամաւն Ապոլոնի ապա հաստեաց զիս Էգեայ
Որդւոյն Պանդիոնի 'ի հարսնութեան զուգութիւն :
Ի սոսա հայեցեալ իմ 'ի զառանցեալ պառաւունս ,
Որ քեցեալ յապարանից արգիական աշխարհին՝
Ըզծընկովք իմովք պատին աղերսաւոր սաղարթիւք ,
Զարաչար ախտացեալ ցաւս . քանզի եօթանց ծընընդոց
Ի դըրունս կադմէականս անկեալ քաջացն հօրամյն՝
Անզաւակ եղեն սոքա . զոր իշխեցողըն արգեան
Ադրաստոս ած երբեր , զի յանկածէն Իդիպեայ
Մասընմուտ առնել ցանկայր զՊոլինիկէս փախըստեայ ,
Ըզփեսայն . և զանկեալսն 'ի սրոյ ճարակ զդիակունս
Ընդ երկրաւ հանգուցանել թաղել կամին մարք սոցա .
Արգելուն բռունք աշխարհին , և բառնալոյ դիականց
Զտան թոյլ , զաստուածոց օրէնս ապախտ արարեալ :
Ընդ սոսա աղօթակից , և վիշտս 'ի նոյն ըզգածեալ
Նոյն ինքնին աչքն յարտասուս համայն թացեալ Ադրաստոս՝
Կայ մընայ ըզսուսերն և զիւր ըզհէք և զվատթար
Ըզճամբարն հանեալ յոգոց՝ զոր առաքեաց իւրովի :
Սա յուղղ ցածուցանել զորգին իմ՝ զիս յորդորէ ,
Գերեթափ դիոյ լինել կամ աղերսիւք կամ զինու
Զօրութեամբ , և չիրմին գերեզմանացն հայթայթիչ :
Իւեթ զայս գործ յանձն առնեմ որդւոյս իմոյ 'ի գործել,

Քաղաքին և Աթենայ. հասանէ ինձ կալ յերկրիս
Քաջարուխ 'ի հարաւունս, յապարանիցս իմ եկեալ
Ի շիրիմս աստ աւասիկ, ուր յակն իմ նախ անկանի
Ցորենոյ առոքահասկ քրտամնածածան տոհմականք:
Սաղարթուց շուրջ զինև պահանգականք են արձանք,
Ի կըրկին աստուածուհեաց 'ի սուրբ բագինս դեգերիմ
Դեմետրի, Պերսեփոնեայ, և գալարին աչք իմ
Ընդ ալիս պառաւելոց և անորդեացս այսոցիկ.
Պատուեմ ըզսուրբ պըսակս. և արձակեալ իմ աչս
Փարոզ զոք 'ի քաղաքն՝ կարդալ առ իս ըզԹեսեւս,
Զի զջոլըր սոցա յերկրէ աստի հանցէ զա 'ի բաց,
Կամ զաղերս Թախանձանաց հարկին լուիցէ՝ առ աստուածս
Երևեալ բարեպաշտօն. քանզի արանց աղագաւ՝
Ըմիոն է զամենայն առնել կընոջ իմաստնոյ:

### ՊԱՐ

Պաղատիմ քեզ ալեւորս՝
Ի մեծաշուք այս շըրթանց.
Ըզքո ծընկովք Թաւալիմ,
Ի մեռելոց լըյծ զորդիս
Յուրուականաց, յօշատեալս
Ի լափլիզօղ մահուանէ
Ի կուր վայրի գազանաց:

### ՊԱՏԱՍԽԱՆԻ ՊԱՐՈՒՆ

Ողորմ աչօք ակնարկեմ
Զարտեւանամբք շուրջ արտօսր,
Խորշոմերես յայսս հարուածք
Ի ծիրանաց և մագլաց:
Զի՞ է զի ոչ նըշմարեմ
Զորդիս մեռեալս իմ 'ի տան,
Եւ ոչ շիրիմս արկեալ լիր:

### ՊԱՐ ԵՐԿՐՈՐԴ

Ծնար երբեմն, վեհդ դու, որդի,
Զառնդ անկողինս գըգուեցեր.
Տուր ինձ ըզքո մըտաց խելս:
Զի՞ ցաւեն ինձ իրանունք



Մարմնոյ՝ որոց ես ծընայն.
Հաւանեցա՛, աղաչեմք,
Գալ զքո որդիդ յիամենոս,
Տալ 'ի ծոց իմ զդիականս
Դալար մարմնոց՝ 'ի շիրիմ:

### ՊԱՏԱՍԽԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐՈՒՆ

Ոչ արժանի, այլ հարկաւ
Եկի վարեալ 'ի բագինս
Անմատուցից աստուածոց:
Արդար է այս. և թէ քեզ՝
Է զօրութիւն, լաւ որդւովք
Սըրբել ըզմեր ձախողանս:
Արդ պաղատիմ յողորմ գութ
Բազկացս իմ տալ զորդի իմ,
Զի գիրկս արկից ըզմարմնովն:

### ՊԱՐ ԵՐՐՈՐԴ

Գումարտակ այլ լալական,
Կոծողաց պար, և ձեռամբք
Ծափս հարկանեն աղախնայք.
Եկայք, չարեացս ողբակիցք,
Եկայք, ցաւոցս վըշտակիցք,
Ըզպար վայից գումարէք.
Ի գոյն բոսոր զըսպիտակ
Այտս արիւնէք ծիրանամբք.
Զի մեռելոց յուղարկ շուք՝
Է կենդանեացըն պատիւ:

### ՊԱՏԱՍԽԱՆԻ ՊԱՐՈՒՆ ԵՐՐՈՐԴԻ

Անյագուրդ այս ածէ զիս
Ի հեշտութիւնս բազմավիշտ.
Յարեւակոխ զերդ վիմաց
Հօսի առու խոնաւուտ,
Անդուլ և լի եմ վայիւք.
Զի որդեկաց մահու գոյժ
Վիշտ և տագնապ ինչ առ մարս
Ծընուցանէ. էհ, մեռեալ՝
Անփորձ կայի 'ի ցաւոց:

## ԹԵՍԵՒՍ, ԷԹՐԱ, ՊԱՐ, ԱԴՐԱՍՏՈՍ

ԹԵՍԵՒՍ

Զի՞նչ ողբոց աղգին ինձ և ձայնք բախմանցըն կըրծից,
Աշխարանըս մեռելոց սանդարամետս յանդընդոց.
Գանգիւնս ահագին, մինչ յարհաւրաց ընդոստնուլ:
Զի՞ արդեւք մայրն իմ եղև, զորոյ ընդ հետս իսկ գայի
Ժամս ձիգս յորմէհետէ էր բացական 'ի տանէ:
Զի՞նչ արդեւք. նորանըշան բանք ինչ ըզմիտս պաշարեն,
Ըզմայրն իմ զառանցեալ՝ որ կայ բագնին առընթեր.
Եւ կանայս օտարականս այլ ընդ այլոյ ըզգածեալս,
Զի յաչացըն փառելոց թափի արտօսր 'ի գետին.
Վարսք նոցա և պատմուճանք ոչ ինչ 'ի դէպ տաճարիս:
Այսոքիկ զի՞նչ, ո՜վ մայր, դու ինձ աստէն գուշակեա՛,
Մատուցից և ես ունկն, զի կասկածեմ նոր ինչ իրս:

ԷԹՐԱ

Ո՛վ որդեակ, մարք են սոքա որդեկորուսք զաւակաց,
Այնոցիկ՝ որ առ կադմեան անկան դըրունս գիտապատ
Եւթանց զօրագըլխաց, աղերսաւորք սադարթիւք
Զինև կան պաշտանորդք շուրջանակի, ո՜վ որդեակ:

ԹԵՍԵՒՍ

Այլ ո՞ք որ հեծեծէն իցէ 'ի դրունս այս ողորմ:

ԷԹՐԱ

Ադրաստոս, որպէս ասեն, արգիւացւոց իշխեցօղն:

ԹԵՍԵՒՍ

Իսկ որ զնովաւ մանկըտի՝ իցեն որդի՞ք ինչ նորա:

ԷԹՐԱ

Ոչ բընաւ, այլ արանց են անկելոցն այն որդիք:

ԹԵՍԵՒՍ

Ես իմէ՞ ուրեմն առ մեզ աղերսաւոր գան ձեռամբ:



՚Ի խտեմ քաջ զի նոքին զայն ասասցեն քեզ, որդեակ:

ԹԵՍԵՒՍ

Ըզքեզ արդ, որ պճըղնաւոր 'ի քըղամիդս՝ հարցանեմ.
Ոգեսջի՛ր, հոլանեալ ըզգլուխդ, ընկեա՛ և ըզկոծս.
Զլինի ուստեք զըրաւ՝ թէ ոչ շըրթամբք մերկասցիս:

ԱԴՐԱՍՏՈՍ

Ո՛վ Թեսեւս, Աթենացւոց հողոյս արքայդ քաջայաղթ,
Ի քաղաքէ քումմէ աջա աղօթակեր եկեալ կամ:

ԹԵՍԵՒՍ

Զի՞նչ ինչ բանից 'ի խընդիր, և յորպիսի՛ իրաց պէտս:

ԱԴՐԱՍՏՈՍ

Գիտիցե՞ս զկորըստաբեր իմ ըզճակատ մարտուցեալ:

ԹԵՍԵՒՍ

Զի լըռիկ և անշառաչ 'նդ Եըլլադաստան ոչ անցեր:

ԱԴՐԱՍՏՈՍ

Կորուսի զարմն անդանօր զարգիւացւոց հոյակապս:

ԹԵՍԵՒՍ

Զայս օրինակ ոճիրս գիտէ գործել ձախող պատերազմ:

ԱԴՐԱՍՏՈՍ

Ի սոցա մարմնոց խընդիր եկեալ չոգայ 'ի քաղաք:

ԹԵՍԵՒՍ

Հարցե՞ր ինչ զՀերմեայ քարոզս՝ առ 'ի թաղել դիականց:

ԱԴՐԱՍՏՈՍ

Այլ յետոյ չետուն ինձ թոյլ՝ որոց սպանեալըն էր ինքնին:

ԹԵՍԵՒՍ

Եւ զի՞նչ բան ասեն ընդ քոյդ նըւիրական հայցուածոցդ:

ԱԴՐԱՍՏՈՍ

Զի՞նչ այլ. բայց յօգուտ չգիտեն զիւրեանց վարել բաղդ:

ԹԵՍԵՒՍ

Զխըրատուէ՞ առ իս եկիր, թէ յայլ ինչ պէտս և յուկամ:

ԱԴՐԱՍՏՈՍ

Ըզմարմինս արգիւացւոց յազատութիւն զի հանցես:

ԹԵՍԵՒՍ

Ո՞ւր Արգոսն իցէ ձեր, միթէ 'ի զո՞ւր պանծասցի:

ԱԴՐԱՍՏՈՍ

Սայթաքեալ վըրիպեցաք, թիկանց արդ քեզ պաղատիմք:

ԹԵՍԵՒՍ

Այս լոկ՞ իցեն քեզ կամք, թէ քաղաքիդ համօրէն:

ԱԴՐԱՍՏՈՍ

Դանայեանք միահամուռ խընդրեն 'ի քէն ըզթաղումն:

ԹԵՍԵՒՍ

Առ ի՞նչ արդ զեւթըն բանակըն մըղեցեր 'ի Թեբէ:

ԱԴՐԱՍՏՈՍ

Փեսայից իմոց կըրկին ձեռն օգնութեան կարկառուլ:

ԹԵՍԵՒՍ

Զի՞յս արդեւք յԱրգիւացւոց ընդ քո դըստերս զուգեցեր:

ԱԴՐԱՍՏՈՍ

Ոչ զարիւն տոհմային ածի 'ի տուն իմ 'ի փառս:

ԹԵՍԵՒՍ

Զաղջկունս արգուհիս արանց եկա՞ց հատուցեր:



ԱԴՐԱՍՏՈՍ

Տիդեայ մին, և ըզմիւսն Պոլինիկեայ թեբացւոյ:

ԹԵՍԵՒՍ

Եւ յումմէ՞ 'ի սերոյն տուրեալ ինկս յայս ածար:

ԱԴՐԱՍՏՈՍ

Պատգամացն Ապողոնի անհըրաժեշտ սադրեալ զայս:

ԹԵՍԵՒՍ

Զի՞նչ գիւթեաց Ապողոն, 'ի զուգութիւն տալ ըզկոյսս:

ԱԴՐԱՍՏՈՍ

Ըզդըստերս իմ զերկոսին տալ առիւծու և կընճի:

ԹԵՍԵՒՍ

Ցի՞նչ ուրեմըն մարթացեր բան զաստուածոյն առեղծուլ:

ԱԴՐԱՍՏՈՍ

Արք երկու փախըստեայք եկին առ դուրս գիշերի:

ԹԵՍԵՒՍ

Ո՛ և ո՛, ասա արդ, քանզի զերկուց բարբառիս:

ԱԴՐԱՍՏՈՍ

Զարթոյց նախ պայքար Տիդեւս, Պոլինիկէս միասին:

ԹԵՍԵՒՍ

Այսօրէն, զերդ գազանաց, ըզքո դըստերս խառնեցեր:

ԱԴՐԱՍՏՈՍ

Ի կըռուին՝ հանդունատիպ էին կըրկին ծիւաղաց:

ԹԵՍԵՒՍ

Ո՞րպէս ասա ըզհայրենի թողեալ սահմանըն եկին:

ԱԴՐԱՍՏՈՍ

Զի Տիդէոս վասն արեան հարազատի ել փախեաւ ։

ԹԵՍԵՒՍ

Իսկ որդին Իդիպեայ երո՞ւմ եԹող ըզԹեբէս ։

ԱԴՐԱՍՏՈՍ

Յանիծից հօրն իւրոյ՝ զի մի՛ զեղբայրն ըսպանցէ ։

ԹԵՍԵՒՍ

Խելօք է արդարեւ կամակարուց այս փախուստ ։

ԱԴՐԱՍՏՈՍ

Այլ եղեալքն 'ի քաղաքին՝ ըզբացակայս զըզուէին ։

ԹԵՍԵՒՍ

Մի՛ եղբա՞յր նորին յընչից ըզնա Թափեալ կողոպտէր ։

ԱԴՐԱՍՏՈՍ

Ի դատել եկի այսր, այլ ամենայն զուր ընդ վայր ։

ԹԵՍԵՒՍ

Գընացե՞ր առ հարցուկս, զընդերաց բոց զըննեցե՞ր ։

ԱԴՐԱՍՏՈՍ

Ո՛հ եղուկս, հալածես՝ ուր մեծապէս իսկ յանցեայ ։

ԹԵՍԵՒՍ

Արդ դու ոչ, որպէս կարծեմ, վըստահ լցես ինչ յաստուած ։

ԱԴՐԱՍՏՈՍ

Եւ զի՞նչ այլ. առ 'ի հեծուկս Ամփիարեայ գործեցի ։

ԹԵՍԵՒՍ

Օրինակ զայս դիւրագոյն դիքն առ 'ի քէն անջատան ։



ԱԴՐԱՍՏՈՍ

Զի մանուկ մարդկան աղմուկ առ և տարաւ ըզխելս իմ։

ԹԵՍԵՒՍ

Փոխանակ խորհըրդոց զանմըտուԹեան չոգար հետ ։

ԱԴՐԱՍՏՈՍ

Եւ այս՝ ըզյոգնահոյլ զօրավարեանըն կորոյս ։
Այլ ո՜վ դու, Եղլադացւոց զարմանաքանչըդ գըլուխ,
Իշխանդ ԱԹենացւոց, զի զամօԹի հարեալ կամ
Անկանել առ ոտմովք, փարել քոյին ըզծընկովք,
Ալեոր իմ ծերունւոյս՝ 'ի բարուԹեան ըմբոշխնեալ.
Սակայն հարկ է տալ տեղի բազմադիմի արկածից.
Ապրեցո՛ ըզմեռեալս, չարեացս 'ի գուԹ խոնարհեալ,
Եւ ըզմարըս զայսոսիկ ըզչնացելոց խընայեա,
Ոյք աշա 'ի խոր ալիս եղեն յորդւոց անզաւակ.
Մինչեւ ատ ժուժեցին գալ՝ յօտար աշխարհ փոփոխել,
Զանդամըն պառաւեալս հազիւ ածեալ հաղ 'ի քարշ,
Ի խորհուրդ ոչ Դեմետրեայ ըզպաշտամունս կատարել,
Այլ զի զմեռեալս Թաղեսցեն. որոց ընդ հուպ հասեալ էր
Ի նոցին ձեռանէ 'ի դամբարանս իջանել.
Իմաստունն՝ է մեծատան 'ի տառապեալն ակնարկել,
Աղքատի ցականելոյ ակընկառոյց կալ յաւագն,
Նախանձեալ՝ զ'ի կարասւոջ հարեալ է սէր տարփաւոր,

. . . . . . . . . . .

Եւ որ մերկ 'ի կարեաց իցէ՝ մի՛ զայլս անգոսնել ։
Ասիցես Թերեւս դու ինձ. Թողեալ զերկիր պելոպեան՝
Առ իմ՞ յԱԹենացիս բառնաս զայս լուծ ծանրաբեռն.
Զայս արդար այժմիկ քեզ պատասխանի դարձուցից.
Սպարտիա անագորոյն խըրԹնածածուկ է 'ի բարս,
Իսկ այլք նըկնատեսակ և յոչինչ պէտս. դու ոստանդ
Իցես լոկ ատակ բեռինըն ծանրուԹեան հանդարտել.
Ընդ աղէտըն խորովիս, և է 'ի քեզ այր առոյգ՝
Պանծալի հովիւ ազանց. զի անհամար և անԹիւ
Առանց զօրագըլխի կորեան երբեմն քաղաքկնեար։

ՊԱՐ

Յեդյեղեմ և ես ըզնոյն բան զոր ասացնա առ քեզ,
Ո՛վ Թեսեւս, գորովեալի՝ ըզմերս լըւեալ եղկուԹիւն ։

## ԹԵՍԵՒՍ

Ի պայքար ուրեք ընդ այլս անկայ բանից այսպունակ․
Զի իշխեաց ոք բարբառել, եթէ չարիք յաշխարհի՝
Յորդագոյն քան թէ զբարիս մահկանացուաց են բաժին․
Այսպիսի ընդդէմ բանից ես ունիմ հակառակ,
Զի լաւ քան ըզչարս առատացեալ են մարդկան,
Զի թէ էր ոչ այս այսպէս, և ոչ զարև կըրէաք։
Եւ գովեմ զայն՝ որ 'ի դից կեանս մեզ շնորհեաց և կենցաղ
Հեռի 'ի պըղծալից գազանական բարոյից․
Միտք խոհուն եդ նախ 'ի մեզ, անդուստ խօսից հըրեշտակ
Ըզլեզուն հաստատեաց՝ ձայնի հընչման ազդարան․
Ըզճարակ մըրգոց երկրի, յերկնից իջոյց 'ի սընունդ
Ջըրեղէն կաթլոց շիթս՝ զի զառ յերկրէս տածեսցէ,
Ոռոգել զարգանդ երկրի․ և առ նովաւ շընորհեաց
Ի տապոյ ու 'ի ձիւնաբեր չարեաց՝ անձին պաշտպանել,
Ծովաչու նաւաց զընացս, զի տուրևառս փոխանակմանց
Վաճառուց լինել միմեանց որոց երկրին իցեն պէտք։
Իսկ որ ինչ զամ մի աննըշան, և հաւաստեաւ գիտեմք ոչ,
Կառուցեալ զաչս 'ի հուր և 'ի թաղանթս փորոտեաց՝
Նըշանակեն մեզ հըմայք, կամ 'ի թըռիչըս հաւուց։
Քանզի զայս օրէնս աստուած կենաց ետ մեզ 'ի հեշտանս,
Մի թէ ո՞չ իցեն յըղփանք՝ որ ոչ նոքիմբք շատանայն։
Փըքացումն մարդոյ՝ քան զդիս պանծայ լինել վեհագոյն,
Եւ 'ի միտսըն սոնքացեալ յաւակնութեան պերճանօք՝
Քան զաստուածս իմաստնագոյն անձամբ յանձինըս թըւիմք։
Ի նոյին սակի և դու՝ լինեալ անբաժ 'ի խելաց,
Ըզդըստերսըն քոյին, կամակորեալ ըզպատգամն՝
Օտարաց ետուր կանայս, զի կենդանի են աստուածք․
Եւ ըզզարմըդ մեծապանծ ընդ պիղծ արեան խառնեցեր,
Ըզտոհմ քո աւերեր․ զի չէ օրէն իմաստնոյ՝
Զարդարս խառնիխուռն 'նդ անիրաւի աղմըկել,
Այլ եւեթ ողոքել 'ի մարդկանէ զբարեբաստս․
Քանզի դից՝ որոց բաղդի հասարակաց է իշխան,
Զայն ըզչէև ախտացեալըն և ոչ զհատեալըն 'ի չարիս՝
Հասարակ ընդ ծընկելոյն կորուսանեն միապէս։
Զամենայն արգիլացուց գումարտակեալ ըղճամբար
Զըղձութիւնս հըմայից քերեալ յընչաց և 'զպատգամս,
Զաստուածովք անցեր զանցեր, եդեր բնաջինջ ըզքաղաքն,



Ի մանկանց ելեալ հրապոյրս՝ որք 'ի փառաց մոլեալ տենչ
Առանց արդարութեան դըրդեն յուզեն մարտի բոց,
Դընեն յաւեր և զոստանս․ է՝ որ 'ի զէն վառել զարդ
Բանակաց կալ իշխան, է՝ որ յաւերս զարթուցեալ.
Շահու այլ ոք աղագաւ, ոչ ըզմըտաւ ածեալ ինչ՝
Ընդ ամբոխն եթէ վընաս ուստեք հասցէ տուգանաց։
Ազգք երեք քաղաքացեաց, որ՝ երջանիկք երանիկք,
Յոչինչ սակայն պիտանիք՝ բայց մըթերել յաճախ գոյս․
Են և որոց չիք ընաւ, և պարենիւ կարօտեալք,
Դըժպըհիք, և ջեռեալ յախտ անհնարին նախանձու,
Որ խայթոցըս՝ արձակեն միշտ յընչաւէտս՝ չարաչար
Ի լեզուաց յոռի արանց առաջնորդաց մոլեգնեալ։
Որ յերից կայ 'ի միջի՝ նա քաղաքիս փըրկութիւն,
Պատուոյ շըքոյ պահապան՝ յօրինուածոյ քաղաքին․
Մի եթէ նիզակակից և քեզ թիկանց լինիցիմ.
Որպիսի առ քաղաքիս բանս յօդեցից բարեմոյն․
Երթ խընդալ զի ոչ առողջ ինչ ըզմըտաւ քով ածեր՝
Թէ 'ի զուր մեք ըզբաղդին առնուլ ըզչափ կամիցիմք։

## ՊԱՐ

Յանցեաւ դա, 'ի մատաղ հասակս մարդկան ապաստան,
Ներելոյ թողութեան պէտք են տըխեղծ հասակին։
Առ բըժիշկդ, ո՛վ իշխան, ահա հասեալ եկեալ կամք։

## ԱԴՐԱՍՏՈՍ

Ա՜յլ ո՞չ դատաւոր չարեացս իմոց ինչ կամիմ.
Եւ ոչ, թէ գիտիցեմ զանձին ըզխիղճ վընասուն,
Ի քէն, իշխանդ, սաստիցիմ և պատուհաս կըրեցից․
Միայն յօդն եկեացես․ բայց թէ սպուժել կամք են քեզ,
Յանձին կալայց 'ի հարկէ․ և զինչ ինչ այլ մարթիցիմ։
Ազէ ո՛ն, ծերունիք, երթայք 'ի բաց, և աստէն
Ըզդալար սաղարթուց ոստ թող ընկեցէք 'ի ձեռաց․
Ըզդիս և զերկիր, զաստուածուհին ջահազգեստ
Վըկայս ձեզ ըզԴեմետր և զարփենւոյն ճառագայթս,
Զի 'ի զուր և 'ի գերև եղին բոլոր պաղատանք։

. . . . . . . . . .

Նա որդի էր Պելոպայ, և մեք յերկրէն պելոպեանց
Ըզնոյն՝ յերակունս ունիմք արիւն՝ զոր և դու․
Զի՞ գործես․ այնչափ անփոյթ, և վըտարես 'ի հողոյն



Гос. Пуб. Библиотека

Զպատուանս ունայնաձեռն լքեալ յիւրեանց աղերսից·
Աղէ մի· զի գազանաց ևս կան վիմուտք ապաւէնք,
Գերելոց՝ բագինք դից, և քաղաքի՝ այլ քաղաք
Ի յուզել ամբոխութեանց. զ՚ի մարդկեղէն կենցաղումն՝
Չիք ինչ այն՝ որ ցըվախճան յերանութեան տևեսցէ։

ՊԱՐ

Մերձեցի՛ր, ո՛վ տառապեալ, զՊերսեփոնեայ թող ըզսեամս,
Մերձեցի՛ր, և գըրկապինդ լեր ըզծընկովքըն դորա,
Զորդւոց գընացելոց բառնալ ըզդին, վա՜յ եղուկս,
Զորս ՚ի դրունըն Կադմեայ միանգամայն կորուսի.

ՄԻՒՍ ՊԱՐՆ

Ո՛հ ո՛հ. կանգնեցէք զիս, յուղարկեցէք, տարայք զիս,
Զդողդոջուն և ըզհիւծեալ հաստատեցէք ըզբազուկս.
Ահա ՚ի ծունկս, ո՛վ սիրելի, ո՛վ հոյակապդ յԵլլադայ,
Կամ խոնարհ, փայփայել ըզծունկըս քո իմ ձեռօքս.
Փոխանակ որդւոց ընդ իս որ վըշտագինս եմ՝ գըթա՛,
Հեծեծանս ողորմելի ես թափառոտս յեղյեղեմ,
Մի՛ անթաղ թողցես ՚ի կուր զորդիսս աստէն գազանաց,
Ակնարկեա յականողիս՝ զի արտասուօք ուռուցեալք
Շիրիմս հայցեն որդւոց առ քև յաղերս խոնարհեալ։

ԹԵՍԵՒՍ

Զի՞ լաս, և զպատմուճան՝ ծածկոյթ զաչօքդ արկանես,
Հեծութի՞նք թերևս սոցա ըզսիրտդ փափուկ կեղեքեն.
Այլ և յիս ըզգամ, մայր. ամբարձ ըզգլուխդ աղէրեկ,
Դըլա՛ յարտասուելոյ հուպ առ բագնաւս Դեմետրի։

ԷԹՐԱ

Ա՜խ, ա՜խ։

ԹԵՍԵՒՍ

Ո՛չ ՚ի քեզ անկ է զսոսա աշխար եղեալ աղխալ։

ԷԹՐԱ

Ո՛վ կանայք չարաբաստք։



ԹԵՍԵՒՍ

Ի նոցայն չես համարի։

ԷԹՐԱ

Գեղեցիկ ինչ քեզ արդեօք կամ քաղաքիդ զրուցեցի՞ց։

ԹԵՍԵՒՍ

Հանճարոյ բանս բազում անգամ ասեն և կանայք։

ԷԹՐԱ

Այլ կընճիռն խափանարար ինչ կայ բանիցս խօսելոյ։

ԹԵՍԵՒՍ

Զշայեկանս ՚ի սիրելեաց ծածկել, կարծեմ, չէ ըմբոն։

ԷԹՐԱ

— Քա՛ւ լիցի թէ լռեցից. զի ապա մի դըսրովել
Զլռութիւնս հարկեցայց՝ որպէս թէ չար ինչ գործեալ.
Երկուցեալ՝ թէ չէ ինչ մարթ քաջաբանել և կընոջ,
Առ ահին և ըզբարուք բանսըս ապախտ արարից։ —
Զաստուածոյսն ՚ի դէպ, որդեակ, ըզգուշանալ պատուիրեմ,
Գուցէ ինչ թիւրեալցիս՝ արհամարհեալ ըզնոքիմբք.
Ցայն ամենայն ուղղագոյն՝ ՚ի մի յայս մարթ է վրիպել.
Պէտք թէ չէին ժըպըրհել՝ առ ՚ի սանձել զանիրաւս,
Քաջ իսկ ըզլռութիւն պահեալ էր իմ ապաքէն։
Աւասիկ որ փառս այժմիկ ածէ և շուք քեզ, որդեակ,
Ոչ երկիւղ և ոչ մի ահ գոյ ինձ՝ լինել թելադիր։
Զվըրժագործս ՚ի մարդկանէ՝ և որ զըրկեն ըզմեռեալս
Ի չիրմին օրինաց և ՚ի յուղարկ հանդիսից՝
Իւրովի քոյին ձեռամբ սանձահարել պարտ է քեզ.
Զի ըզկարգս Ելլադականս ՚ի վեր ՚ի վայր հարկանեն։
Այս է՝ որ ըզքաղաքս կալեալ մարդկան պինդ ունի,
Գեղեցիկ յորժամ կարգօք ըզգուշասցի օրինաց։
Իցէ՝ թէ ոք ասասցէ, զի առ բարուցդ վատութեան
Իբրև մերձ շըքեղաշուք կայր քեզ պըսակն առընթեր՝
Կորուսեր առ երկիւղի, պայքարեցար ՚ի կըռիւ
Ընդ կընճռի ազատական՝ գործ մի յախուռն ապիկար.

Ի կորդակն յորժամ հայել եհաս ու 'ի սայր գեղարդան՝
Զահի և զերկիւղի յայնժամ հարար վատութեամբ ։
Զայսօսիկ 'ի քէն ինչ մի լուիցեմ ըզգործս, իմ որդեակ ։
Տեսանես, քանի ընդ վատըն հայրենիք խոլթոտին .
Զի 'ի ճըգունս ուռճանայ . իսկ թէ կայցէ յուլութեան՝
Ի ստուերս նըսեմութեան չիջելափառ կորընչի ։
— Ո՞չ արդեւք 'ի մեռելոց և չուառական այս կանանց
Ի թիկունս, ով որդեակ, հասանիցիս 'ի նըպաստ .
Ցիրաւանց թէ մըտադիւր յօժարիցիս դու 'ի դատ ։
Զամբոխն կադմէական զոր յօրացեալ տեսանեմ,
Բայց կարծեմ այլ ինչ նոցա խաղալ բաղդի խաղըս նոր .
Զի գիտեն դիք զամենայն յեղափոխել վեր 'ի վայր ։

## ՊԱՐ

Ո՛վ տիկին զարմանալի, քանի՛ շըքեղս խօսեցար
Զինէն և զնըմանէ. 'ի բարութիւն ինձ կըրկին ։

## ԹԵՍԵՒՍ

Այսոքիկ յինէն զըրոյցք են խօսեցեալք, ով մայրիկ,
Ի կէտ նըպատակի հային՝ յոր միտք իմ ոգեաց
Ըզկարծիս, թէ յորքանի ըստերիւրեաց խորհըրդոց .
Ըզնոսին գիտեմ և ես, զոր ինձ լինիս խըրատտու,
Զի հեռի ամենևին 'ի բարոյից այս իմոց՝
Դըժուարին յիրաց խուսել և միշտ գործել ըզչարիս
Տընկեցաւ յիս բընոյթ սովորութիւն՝ առ Հելլէնս
Զարաց հանապազօր պատուհասիչ ինձ լինել ։
Անմարթ այսուհետև է զիս թափել 'ի ճըգանց,
Զինչ զինէն հըծծեսցեն 'ի մարդկանէ դըժպըհիք .
Զի դու իսկ որ զիս ծընար, զընդաս զինև երկիւղիւ,
Հանդարտել վատակոցըս առաջին յորդորես .
Զեռընթափ եղէց 'ի գործ առ 'ի չորթել զդիակունս՝
Համոզկեր ողոք բանիւք, թէ ոչ՝ զինու զօրութեամբ .
Այսպէս արդ, և ոչ դից արկեալ ընդդէմ նախանձուկս .
Քաղաքիս զայսմ համօրէն տաց արկանել նախ վըճիռ .
Ըստ կամաց իմոց լիցի . և մուտ խօսիցս արարեալ՝
Ի համբոյր հաշտութեան ըզժողովուրդն յանգուցից .
Զի ես ինքն ըզմիիշխան ետու նըմին զպետութիւն,
Ըզքաղաքըն զուգաւճիռ յազատութիւն թափեցի ։



Բանիցս իմ այսոցիկ առից վըկայ զԱդրաստոս .
Ի խըռան երթայց նոցա, և զուշ մոգեմ և զուրուշ.
Ի մանկանց Աթենացւոց զընտիրն ընտիր գումարեալ՝
Անդ երթայց . և նըստեալ, պատգամաւորս յըղեցից՝
Ի խընդիր դիականցըն անկելոց՝ առ Կրէոն ։
Օ՛ն 'ի բաց, ծերունիք, ըզսուրբ սաղարթս 'ի մօրէս,
Զի 'ի տուն ըզսա Էգեայ առաջնորդեալ տանիցիմ,
Ըզսիրուն կալեալ ձեռաց . քանզի առ մարս ապաշնորհ
Որ ոք ոչ զերախտիս ծընանելեացն հատուսցէ,
Զի չըքնաղ տըրիտուրս տըւեալ ումեք առ ծընողս՝
Ըզնոյն նըմանատիպ յիւրոց որդւոցն ընկալցի ։

## ՊԱՐ

Զիպպոյծ Արգոս՝ յատակ հայրենեաց,
Լըւարուք զայս, լըւարուք՝ զիշխանիս
Առ աստուած զերկիւղած սէր, և առ մեծ
Պելասգեանս, և որ յԱրգոս կան բընակք ։

## ՊԱՏԱՍԽԱՆԻ ՊԱՐՈՒՆ

Ի վախճան, ո՛հ, երբ յանգէր վըտանգս իմ,
Զի զաղխ մարց 'ի սըրոյն թափեսցէ,
Արասցէ հաշտ և զերկիր Ինաքայ ։

## ՊԱՐ՝ ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ

Անդրի սուրբ՝ դից է պաշտօն քաղաքիս,
Եւ 'ի վարձս՝ յաւէժական բարութիւնք,
Աջողակ հասցէ՞ վըճիռ ինչ նա մեզ,
Զի չիրիմս տացուք որդւոց 'ի թաղել ։

## ՊԱՏԱՍԽԱՆԻ ՊԱՐՈՒՆ՝ ԵՐԿՐՈՐԴ

Ցիս, քաղաքդ Աթենասայ, հայեաց մօրս,
Մի՛ զօրէնս մահկանացուաց աղարտել.
Արդարոց բերես ըզբաղդ, իսկ յոռեաց
Զախողանս . հէքին լիցիս միշտ նըպաստ ։

## ԹԵՍԵՒՍ · ՔԱՐՈԶ ԱԹԵՆԱՑԻ · ՊԱՐ · ԱԴՐԱՍՏՈՍ

ԹԵՍԵՒՍ

Եթէ արուեստ այս իցէ քո և սպասարկու լինիցիս
Քաղաքիս և ինձ ինքնին, հռչակ հանեալ ըզքարոզս,
Հասեալ ընդ Ասովպոս և ընդ վտակս իսմենեան,
Պանծալի բռնաւորին Կադմեանց ըզբանս ոգեսջիր.
Ազդէ 'ի քէն Թեսեւս տալ ըզմեռեալսն 'ի շիրիմ,
Արժանի լինել ըզձիցն՝ բնակակից գոլով քեզ.
Եւ զամենուն Երեքթիդեանց քեզ սիրելի արասցես:
Իսկ գովել թէ կամիցին ըզբանս՝ անդէն կաց մնա՛,
Եւ իցեն եթէ յուրաստ՝ զայս յաւելցես կրկին բան.
Ընդունել զեկս իմյս ասպարակիր բանակին.
Գումարտակ ճեպընթացիկ նկեալ հասեալ առղեսցի՝
Ըզվըճիռ Կալ՛լ՛իքորեաւ՝ վառեալ 'ի զէն և 'ի զարդ:
Մըտադիւր կամակարուց յանձին կալաւ փութապէս
Քաղաքն զվիշտ վտանգիս, քանզի գիտաց և զիմ կամս:
Ազէ, ո՛վ արդեւք առ իս գայ մերձենայ յանդիման,
Կադմէացի, որպէս կարծի՝ զի հաւաստեաւ գիտեմ ոչ՝
Քարոզ ոք. հանգարտեա՛, դիւր արասցէ թէ ճըգանցդ,
Ի նըպաստ ելանիցէ և խորհըրդոցս իմ մըտաց:

ՔԱՐՈԶ

Ո՞ երկրիս այսմ իշխեցող. ո՞ւմ քարոզել իցէ ինձ
Ըզպատգամըս Կրէոնտեայ՝ որ 'ի Կադմոս բռնանայր.
Զի մեռաւ Ետէոկլէս զեւթնաբերան դըրամբք շուրջ
Ցեղըօրէն իւրմէ անդէն Պոլինիկեայ ձեռանէ:

ԹԵՍԵՒՍ

Ա՛յլ յայլմէ, օտարական, բանիցդ ըսկիզբն նախ եդեր.
Աստանօր խընդրեալ արքայ. զի ոչ իշխի այս երկիր
Ցառնէ 'ի միոջէ, այլ ինքնօրէն է քաղաք.
Եւ տիրէ խառնաղանջ ամբոխն որդի 'ի հօրէ
Եա զետէ տարեւոր, և ոչ տըւեալ մեծատան
Առաւել շուք, այլ ըզնոյն և աղքատին հաւասար:



ՔԱՐՈԶ

Զի զայս մեզ աւասիկ կամակարուց անսացեր
Տալ տեղի, զի քաղաք՝ յորմէ աշա եկեալ կամ
Նըւաճեալ 'ի միոջէ և եթ և ոչ յամբոխէն.
Զէք և ոչ ոք 'ի նըմա՝ որ ոռնքացեալ ինչ բանիւք՝
Շըրջեսցէ զամենայն յիւր օգտութիւն և 'ի փառս:
Ոչ և այն ոք որ համբոյր ողոքանօք վարեալ նախ՝
Ի վընաս ապա դարձցի. և խակութեան նենգանօք
Գողացեալ զնախկին ոճիրս՝ արդարացաւ յատենի:
Եւ զիա՞րդ իցէ ինչ մարթ որ սայթաքէն հանապազ՝
Առաջնորդ կալ քաղաքի և ուղղաբար բատածել:
Արուեստիս այսմիկ բազում իմաստութեան գոյ հանճար,
Զի բարիոք յաջողեսցէ. զի այր աղքատ հողագործ
Ճըգնիցի ի տոկ թէպէտ և արարոց անճաշակ,
Զամբոխին հոգալ խնամս իսպառ ըսպուռ զըլասցի:
Զի աւադ ինչ որներոյ ոչ ըստ մըտացն իցէ այս,
Յորժամ այր ոք աննըշան 'ի բարձրագահս մատիցէ,
Խառնամբոխ վարել ազինս այն՝ որ ումպէտ էր յառաջ:

ԹԵՍԵՒՍ

Նենգաւոր դու քարոզդ և հրապուրիչ բանսարկու,
Ի սոյն որովհետև իջեր պայքար դու խօսից
Ո՛ւնկըն դիր, զի զբանից դու գըրգռեցեր նախ ըզբոց:
Քան զայր ըզբըռնաւոր չէք քաղաքի վնասակար.
Առ չգոյէ հասարակաց ինչ օրինաց 'ի միջի,
Առանձինն իշխան լինի ոք յիւր զօրէնս վըտարեալ,
Ինքնաձեռն և ուշոգի. և քեզ այդ զինչ իցեն պէտք:
Իսկ օրէնք թ'են 'ի գրի, լիցի և հարթ իրաւունք
Ընաւադ տըկարին և մեծատան միապէս:
Զհըզօրիւ գլեսցէ տըկարն արդարութիւն ըզգեցեալ:
Ի բերան ունել զայս կիրթ ազատութեան բան շըքեղ,
« Կամիցի թէ ոք երբեք զրուցել օգուտ քաղաքիս ».
Յայնժամ ոք պայծառացի խօսիւք 'ի պերճ ատենի,
Այլ ոք լուռ լիցի, քան զայս իցէ՞ արդար ինչ օրէնք:
Խառնաղանջն յորժամ տէր իցէ երկրի ինքնօրէն,
Նա սիրէ զպատանեաց քաջ որերոյ բազմութիւն.
Իսկ թէ այր ոք թագաւոր՝ վընասաբեր գըրէ զայս.

Եւ զոր գամ մի խոհականս յաւագանւոյն նշմարէ՝
Առ ահի բռնաւոր իշխանութեանն՝ խողխողէ։
Եւ զխո՞րդ այնուհետև հարբստանայ քաղաք ինչ,
Յորժամ ոք զարնանազուարճ անդաստանի զերդ ըզհասկ
Հընձեսցէ ըզպերճանս, դիցէ զարբունս ծաղկընկէց։
Զի՞նչ օգուտ ճոխութեան գոյս մըթերել զաւակաց,
Թէ լիցէ բռնաւորին՝ նոքիմբք սիգալ պերճութեամբք
Կամ 'ի տան գեղեցիկ տածել կուսանս սըրբութեան,
Որ յաւուր միում լիցին կուր տըռփանաց արքային,
Ի ցաւ սաստիկ ծընողաց. ո՜հ, մի՛ տեսից այլ զարև,
Թէ դըստերք իմ 'ի բռնի 'ի հարսնութիւն վարեսցին։—
Այս յինէն քաջադէպ պատասխանի տըւեալ քեզ։
Առ իմէ՞ և յի՞նչ խընդիր աստ յիմ երկիր եկեալ կաս։
Արտասուել եկիր անշուշտ, թէ չէ յըղեալ քաղաքին,
Ընդ ումպէտ բանիցըդ քոց. զի քարոզի առն արժան
Ըզկարգեալ ըզհըրամանն փութով է ազդ առնել մեզ
Եւ դընալ. այսուհետև ըզգոյշ կացցէ Կըրէոն՝
Քան ըզքեզ ոչ լեզուագար զոք յիս հրեշտակ արձակել։

ՊԱՐ

Ո՜վ եղեռն. յորժամ բաղդն լիցէ նըպաստ ինչ չարաց
Ընդվըզին, զի հանապազ կալ 'ի բարւոջ ցանկանան։

ՔԱՐՈԶ

Այս ահա յինէն պատգամք. թէպէտ թուիցի քեզ արդար
Յոր վիճիս, այլ գիտա՛ զի այլ են միտք իմ ընդ այս.
Ես չըտամ ինչ քեզ հրաման և 'նդ իս ամբոխըն Կադմեայ,
Զի զերկիր զայս՝ Ադրաստեայ տացես թոյլ գալ 'ի կոխել։
Իսկ թէ արդ լիցէ անդէն, չև արեւուն անկանել՝
Զարհաւիրս բընաւ լուծեալ աղերսաւոր դըրօշուց
Վըտարեա՛ յերկրէ աստի. և մի՛ փոյթ ինչ լիցի քեզ՝
Թաղել բռնի ըզմեռեալս, զի չիք ինչ քեզ ընդ Արգոս։—
Թէ բանից իմոց անսաս՝ ըզնաւդ առանց ծըփանաց
Վարեսցես ըզ քաղաքդ. ապ՝ եթէ ոչ՝ ծուփք բազում
Ճակատուց՝ 'ի մեզ ու 'ի քեզ և 'ի համհարզսդ յորդեսցեն։
Ուշիմ լե՛ր, և մի իմոց բանիցս ընդդէմ դառնայցես,
Քանզի դու յազատութեան այժմիկ իշխան ես ասէն
Զայրացեալ խըրոխտանօք, իսկ որ բազկաց 'ի կորովս



Յուսայ՝ ընդ վայր է և զուր, որ բորբոքեաց ըզբազում
Ի ցասումն քաղաքանին յանչափ ըզմիտս ուռուցեալ։
Ի քըւեայս թէ եկեսցէ քաղաքն ողջոյն առ 'ի մարտ,
Ամենայն ոք անարգեալ ըզմահ յաչս իւր՝ դիմեսցէ,
Եւ վընասն այնուհետև բոլոր ընդ քեզ կըրթեսցի։
Թէ լիցեն արհաւիրքս հանդէպ աչաց բոլորից՝
Ոչ մոլեալ Ելլադա երբեք 'ի զէնս՝ կորընչէր։
Եւ թէպէտ յերկոցունց քաջ իրագէտ եմք մարդիկ՝
Զօրագոյն ո՛ թէ լիցէ, ո՛ր չար անդուստ և բարի,
Քանի՛օն քան ըզմարտս խաղաղութիւն լիցէ լաւ։
Եւ նախ իսկ առաջին՝ այս տենչալի աստուածոց,
Թըշնամի է կատաղեաց, սիրէ զծընունդս բազմածին,
Յօրանայ մեծութեամբք. զորս արարեալ ապախտ չարքս
Քըրքութիմք պատերազմօք. իւրաքանչիւր այր զընկեր՝
Ի գերութիւն նըւաճեմք, և կամ քաղաք զայլ քաղաք։
Ի նըպաստ աւասիկ կաս դիւականց, թըշնամեաց,
Ի բառնալ և 'ի թաղել զորս յոխորտանք արկ տապաստ։
Կապանեայ ոչ ինչ 'ի դէպ շանթահարեալ ապաքէն
Մըխեալ կայ յուղղաբերձ անկեալ մարմինն սանդըխոց
Յոր ջանաց վերելակել, և ըզքաղաքն երդուաւ նա
Բընաջինջ առնել թէ դից կամօք և թէ յակամայս։
Եւ ահեղ ինչ Քարիւբդիս յափըշտակեաց զհաւադէտն,
Ըզկառսըն քառաձիս խարդաւանեալ յիւր բերան.
Են և այլք որ անկեալ յայն 'ի դըրունս զօրապետք
Զոսկերաց քարակոչկոճ եդեալ վըրդօք ըզզօդուածս։
Այլ այժմիկ պանծացի՛ր 'նդ Արամազդայ ընդ հանճար,
Կամ ոգեա՛ թէ արդարև դիք կորուսին ըզվատթարս։
Զառաջինն ըմբռն սիրել է իմաստնոյ զիւր որդիս,
Ըզծընողս այնուհետև, և զհայրենիս պանծալի
Առնել պարտ. զի վընաս մեծ է յանդուգն առաջնորդ։
Թէ նաւու նաւազն 'ի դէպ ժամու գիտէ վարել քաջ։
Արութիւն մեծ է այս և զգօնութիւն անվըրէպ։

ՊԱՐ

Շատ անշուշտ է պատուհասն յԱրամազդայ արձակեալ։
Նախատինս ձեզ այսպիսի թըշնամանել չէ ինչ պարտ։

ԱԴՐԱՍՏՈՍ

Ո՜վ վըխժագործդ . . . .

ԹԵՍԵՒՍ

Լո՛ւր Ադրաստոս, կալ զբերանդ.
Մի՛ քան զիմս ըզքո բանս ինչ նախամեծար դընիցես.
Քանզի ոչ առ քեզ քարոզդ այդ է յըղեալ ազդարար,
Այլ առ իս. և ինձ է պարտ պատասխանի տալ նըմին:
—Նախադոյն բանիցըդ քոց նախաբարբառ ասացից. —
Ճանաչեմ ոչ ըզկըրեօն իշխան ինձ ինչ իշխեցող,
Ոչ զօրագոյն թէ իցէ, մինչ մարթասցի առնել հարկ
Ի գործդ յայդ զԱթենացիս. ամենայն ինչ վեր 'ի վայր
Տապալի այնուհետև՝ թէ հնազանդիլ պարտիցիմք:
Ոչ ըսկիզբն ինչ կամիմ լինել մարտի այդպիսւոյ,
Որ և ոչ ընդ այսոսիկ եկի յաշխարհըն կադմեան.
Այլ մեռեալ ըզդիակունս, — ոչ 'ի վընաս քաղաքիդ
Եւ ոչ մարդախողող նախճիրս յուզեալ ճակատուց, —
Տալ ցանկամ 'ի շիրիմ, զօրէնս համակ Հելլենաց
Ի հաստօք պահեալ, զի զի՞նչ քան զայս իցէ ինչ չըքնաղ:
Թէ երբեք ախտս ինչ իցէ ձեր ախտացեալ յԱրգեանց անդ՝
Մեռեալք են. վըրէժխնդիր լերուք արհամք թըշնամեաց,
Ի նոսա անուն կեղտ. զի գընացին իրաւունք:
Թողէք արդ զմնեայ հողով ըզդիակունսըն ծածկել:
Զի ուստի իւրաքանչիւր ոք եկն 'ի գոյ և լինել,
Վերըստին դարձցի 'ի նոյն, ապա հոգին ընդ եթերս,
Եւ մարմինն 'ի հող երկրի, զի չէք ինչ մեր սեպհական.
Այլ զի լոկ լիցի հոգի բընակարան զոլ կենաց.
Ըզկընի և ինքն 'ի բուն իւր ընկլուզցէ ըզդայեակն:
ԶԱրգոսին կարծես ապախտ առնել անթաղ մեռելովք,
Ոչ երբեք. այլ կըրթի այս հասարակաց Ելլադայ.
Թէ արժան իցէ զըրկել յիւր իրաւանց ըզմեռեալս
Արտաքոյ թողեալ հողոյ. զի վատութիւն բերցէ այս
Եւ կարի իսկ հըզօրաց, թէ այս կացցեն անդ օրէնք:
Եւ առ իս ըզդըժընդակ ըսպառնալիս բերեալ գաս:
Զանգիտէք 'ի մեռելոց, որ կան թաղեալ ընդ գետնով:
Աւ իմ՞ ձեզ երկընչել. միթէ բըրեսցեն 'ի հիմանց
Ըզթեբէ՝ մեռեալ մարմինք, կամ թէ որդիս յալս երկրի
Ծնանիցեն, յորոց յաւուր միում եղեն վրէժխնդիրք:
Ի նանիր են այսոքիկ բանդագուշանք զուր՝ լեզուի,
Ցընդունայն և տարապարտ երկիւղ ընդ վայր երկընչել.



Այլ դուք ո՛վ ընդունայնք, զմարդկան չարիս ծանիրուք.
Պատերազմ է կեանք մարդոյ, է՛ որ արդէն աջողեալք,
Կէսք լիցին երջանիկք, այլոց լինել յառաջմէ:
Եւ բաղդն ինքնին սոնքանայ, զ'ի չուառական որերոյն՝
Մեծարեալ պատուի զօրէն երջանկաւէտ ինչ բաղդի:
Իսկ այր բարեբաստիկ՝ զի մի զհոգին կորուսցէ,
Գովէ զնա մինչև յերկինս. և զայս արժան է գիտել,
Իմաստնոյ՝ չափով և մի մոլեգնութեամբ ուռճանալ.
Քաղաքին և ոչ իւիք վընասակար զոլ երբեք:
Հա՛պա օն, զկորստական մեռեալ մարմնոց դիակունս
Ի թաղել տուր կամողացս լինել յուղարկ հանդիսի:
Բայց ժըխտել թէ կամիցիս՝ եկեալ ըռնի թափեսցից,
Զի երբեք հընչիցի մի 'նդ հելլենացիս զըրոյցս այս,
Թէ առ իս եկեալ ուրուք 'ի քաղաքէն Պանդիոն,
Հինօրեայ աստուածեղէն օրէնք յաղարտ վարեցան:

ՊԱՐ

Զօրացի՛ր, զարդարութեան պահեալ յինքեան ողջ ըզլոյս
Ի թունաւոր բաներոյն մարդկան լիցիս մազապուր:

ՔԱՐՈԶ

Կամիցի՞ս զի բանս հակիրճ կարճ 'ի կարճոյ ասեմ քեզ:

ԹԵՍԵՒՍ

Ասա թէ է քեզ հաճոյ, զի զլըռութիւն սիրես ոչ:

ՔԱՐՈԶ

Ի յերկրէն Արգիացւոց ոչ թափեսցես ըզմեռեալս:

ԹԵՍԵՒՍ

Ապա լո՛ւր և իմոց բանից թէ կամք քեզ իցեն:

ՔԱՐՈԶ

Անսացից, զի անցնիւր ումեք արժան է տալ մասն:

ԹԵՍԵՒՍ

Ըզմեռեալսըն թաղեցից՝ շորթեալ յերկրէն Ասոպեայ:

ՔԱՐՈԶ

Նախագոյն ուրեմն լիցի քեզ ոգորել՝ի կռուի։

ԹԵՍԵՒՍ

Յոգնութիւ ճըգունս և այլ երբեք տարայ նըրովի ։

ՔԱՐՈԶ

Բաւական յաղթնեալն ծընաւ ըզքեզ քոյին Հայր ։

ԹԵՍԵՒՍ

Որ գամ մի են վատըրւերք. այլ ոչ պատժեալք ըզբարիս ։

ՔԱՐՈԶ

Մեծամեծս գործել ուսար, որպէս և քոյդ խակ Աթէնք ։

ԹԵՍԵՒՍ

Զի որ բաղումս վաստակի, և պերճանայ բազմագոյնս ։

ՔԱՐՈԶ

Եկ աղէ՝ զ՚ի քաղաքին ըմբըռնեսցիս գեղարդեամբ ։

ԹԵՍԵՒՍ

Եւ զիա՞րդ 'ի վիշապէն արիական ծընցի զարմ։

ՔԱՐՈԶ

Տեսցես ընդ փորձ խակ անցեալ. զի տակաւին մանուկ ես ։

ԹԵՍԵՒՍ

Մի գըրգռեր զիս 'ի ցասումըն բարկութեան բորբոքել
Այգոքիւք խըրոխտանօքդ, այլ երթ յերկրէս աստ 'ի բաց,
Զընդունայն բանից բեռինսըն միւսանգամ շալակել։
Տարապարտ խօսիմք 'ի զուր, պարտ և արժան է խաղալ
Այր այր անձնիւր զինւոր, և որ 'ի կառս է հեծեալ.
Փըրփըրերախ երիւարաց սանձակոծել ըզբերանս
Ահագին փըռընչելով 'ի հող յատակ կադմեանց։



Յաշխարհ կադմէական եօթնադըրունս չըւեսցի
Ես փոխան քարոզի ։ — Քեզ տամ հրաման մընալ աստ
Եւ զերկաթըն սայրասուր միշտ ունիցիս 'ի բըռին,
Ադրաստէ, և մի ընդ իմս ըշտոգանեալ խառնեսցես
Ըզքո բաղդ. զի ես ինքնին իմ աստուածոյն միայն
Խառնեցայց ուժգնաբար 'ի գոռ մարտին զուպարած ։
Միոյ ևեթ են ինձ պէտք՝ առնուլ զաստուած 'ի թիկունս
Որ պաշտէն զարդարութիւն. զի լաւութիւն օգնէ ոչ՝
Թէ 'ի դից ոք չլինիցի մահկանացուաց աջողակ ։

## ԱԴՐԱՍՏՈՍ, ՊԱՐ

ԿԻՍԱՊԱՐ Ա.

Ո՛վ ողորմ մարք եղկելի զօրավարաց
Քանի՜ զսիրտըս արհաւրաց լընուն ահք ։

ԿԻՍԱՊԱՐ Բ.

Որպիսի՜ նորանըշան բարբառս ձայնից ես լըսեմ։

ԿԻՍԱՊԱՐ Ա.

Գումարի չոկատ ահեղ ըսպառազէնք Աթենայ ։

ԿԻՍԱՊԱՐ Բ.

Զօրութեամբ զինու արդեօք, թէ տուրեւառ ինչ խօսիւք ։

ԿԻՍԱՊԱՐ Ա.

Առ իմէ անգութ հեղմունք
Արեանց, և վայք աղխտակոծ.
Լանջակոծ բախմունք սըրտից.
Ո՞ր բան գուցէ իմ հէքիս
Սոցին պատճառս բաղբաղել։

ԿԻՍԱՊԱՐ Բ.

ՊԱՏԱՍԽԱՆԻ Ա.

Ըզբարեբաստն բարձցեն երբեմն
Պարկայք, և զայր պանծալի.
Յայս խակ է սիրտ իմ վըստահ ։

ԿԻՍԱՊԱՐ Ա․

Արդար ըղձիս դու ոգես ։

ԿԻՍԱՊԱՐ Բ․

Ո՞ այլ ըղձադ բաշխէն մեզ ։

ԿԻՍԱՊԱՐ Ա․

Պէսպէս ըղձիս ես առ մարդիկ նըշմարեմ ։

ԿԻՍԱՊԱՐ Բ․

Մօտալուտ ահիւ յերկիւղ լուծանիս ․
Արիւն զարիւն և ոխք ըղձքէնըս մըղէն ․
Զարիս դիք բաշխեն ոգւոց մահացուաց ․
Ամենայնի սահման և եզր են աստուածք ։

ԿԻՍԱՊԱՐ Ա․

Զիա՞րդ 'ի դաշտ ամրաբերձ
Զկալլ իքորայ թողեալ ջուր
Աստուածայնոյ՝ ժամանեմք ։

ԿԻՍԱՊԱՐ Բ․

Թէ թևս քեզ ոք տայր յաստուածոց ,
Զի թռչէի յերկգետ քաղաքն ։

ԿԻՍԱՊԱՐ Ա․

Ըղձիրելեաց տա՛յր ոք ինձ անդ
Ըղձիրելեաց տեսանել բաղդ ։

ԿԻՍԱՊԱՐ Բ․

Ո՞ր վախճան մընայ անդ
Հըզօր երկրին իշխողի ։

ԿԻՍԱՊԱՐ Ա․

Միանգամ ըղձիս թիկանց կարգասցուք ,
Այս լոկ միայն են ինձ հաւատք յերկիւղի ։



ԿԻՍԱՊԱՐ Բ․

Ո՜վ Արամազդ , հընոյ մօրն ծընօղ դըստերն Ինաքայ ։

ԿԻՍԱՊԱՐ Ա․

Քաղաքիս իմ օգնական լեր և աջող 'ի մարտիս ։

ԿԻՍԱՊԱՐ Բ․

Ըզքո փառս , ըզքո նեցուկդ այսընանախատ քաղաքիդ՝
Ամէարձից , տուր օգնութիւն , անդր 'ի խարոյկ բոցակէզ ։

## ԱԴՐԱՍՏՈՍ , ՊԱՐ , ՀՐԵՇՏԱԿ

ՀՐԵՇՏԱԿ

Գեղեցիկ բանըս բաղում ասել եկեալ կամ , կանայք ․
Ես միայն մաղապուր ․ զի ձերբակալ իսկ էի
Յորժամ անդ եօթանց բանակք անկան պետացն 'ի կըռուի ,
ԸզՏիրկեայ ափամբք , և արդ ըզյաղթութիւն զամ նօթճել
Զրուցեցից կարճ 'ի կարճոյ ․ ես Կապանեայ արբանեակ ,
Զոր շանթիւ յաճիւն դարձոյց շանթահարեալ Արամազդ ։

ՊԱՐ

Ո՜վ սիրուն , բարեաւ ըզդարձդ քոյին անշուշտ ասեմս ,
Եւ ըզգործոյն Թեսևսի ․ թէ և ճամբար բանակի
Իցէ ողջ ու Աթենացւոց՝ քաջ են պատգամքդ և ըստ մտօս ։

ՀՐԵՇՏԱԿ

Ողջոյն է , որպէս դէպ էր Ադրաստոսի՝ գործեցաւ ,
Յինաքայ չըւեալ՝ զթեբէ արգիացւովք պաշարեաց ։

ՊԱՐ

Բայց զիա՞րդ Արամազդայ՝ որդին Էդեայ զյաղթանակ
Հաստատեաց , և ընդ նըմին նիզակակիցքըն մարտին ,
Պատմեա մեզ , զի քե , վըկայդ ականատես , բերկրեսցուք ,

ՀՐԵՇՏԱԿ

Ճառագայթք պայծառ ականն օրակըշիռ արփենւոյն

Ընդ երկիր տարածանէր, և ըզդըրամբք Ելեկտռեանց
Յաշտարակ մի բարձրաբերձ ելեալ՝ի տես դէտ կայի:
Զերեցունց յայնժամ տեսի զերիս առաջս բանակաց,
Զամբոխն ըսպառազէն ընդ խառնեան ձըգեալ բլուր,
Եւ զինքնին ըզՀոյակապ Եդեայ որդին զԹագաւորն,
Եւ որ անդ յաջումթեւի կարգեալ տողեալ ընդ նըմա,
ԸզՀընոյն Կեկրոպայ Հողոյն բընիկ ըստացողս:
Եւ ինքնին զՊարալոս՝ յաշտէն վառեալ ու՝ի նիզակ,
Առ աղբերըբն արխեան, և երիւարք կառաձիգ՝
Զեզերբք և ըզկողեպք տողեալ՝ի կարգ ճամբարին,
Զոյգ կըշիռ համարով, և մեծ ջոկիր իսկ կառաց
Ի խոնարհ քան ըզչիրիմն Ամփիոնեայ պանծալիս:
Յառաջոյ պարըսպաց կայր խառնաղանջըն Կադմեայ,
Ի Թիկանց եդեալ կուսէ ըզդիակունս մեռելոց,
Հեծելոց կայլին հեծեալք ըսպառազէնք հանդիպոյ,
Եւ կառացըն քառաձիք հանդէպ այլ կառք հաստատեալք:
Եւ քարոզըն Թեսեւսի բարբառեցաւ լու՝ի լու.
« Լուռ լերուք, ժողովուրդք, լուռ և ամբոխըդ կադմեանց
Ունկըն դիք. զի ըզմեռեալս՝ կամք աստանօր ժամանեալ՝
Ի Թաղել յօժարեալք, զօրէնս բոլոր Հելլենաց
Ի հաստոյ ամբոպընդեալ, առանց արեան ճապաղեաց:
Այսոցիկ ոչ ինչ ընդդէմբան քարոզեաց Կըրէոն:
Այլ կայր լուռ յեց յեւր՝ի զէնս. յայնժամ կառացն առաջնորդք
Խառնեցան քառաձիոց անդէն՝ի մարտ աՀագին:
Ելեելս ըզմիմեանց կառօք ճապուկ վըսերեալ
Տողեցան՝ի կարգ մարտի յօրինուածոց հեծելոյն:
Երկաթով է՝ որ կըռուին, այլք շուրջ ածեալ հոսէին
Միասնգամ զերիւարեանն՝ի խառն մարտի ամբոխին:
Զայս տեսեալ Փորբասայ՝ որ էր իշխան հեծելոց
Արանց Երիքթիտեանց և որ կառաց կառավարն
Եւ որ գամ մի Կադմոսի ձիոց էին կառավարք,
Կորովի եռուն դըռոյթ, մերթ յաղթէին և մերթ ոչ.
Զայս յաղն արկեալ քանզի մօտ էի, և ոչ՝ի լըրոյ,
Ըզկառաց անդ գուպարածս և զհեծելոց՝ի նոսին,
Անհամար արկածս անդէն իմ նըշմարեալ, ոչ գիտեմ
Ուստի ըսկիզբն արարից, և զոր յերկուց նախ ոգել,
Ըզփոշին պողեալ՝ի վեր անհընարին մըրըրկաւ,
Կամ թէ զայն՝ որ վեր՝ի վայր և տարուբեր թաւալեալ
Ընդ արիւն, ընդ երասանս և ընդ հեղեղս ճաղպախեաց:



Մարմնոց թաւալգըլոր դիոց, կառաց բեկելոց,
Ընդ երկիր անկեալ տապաստ զանգանէին՝ի փոշի,
Եւ ըզչունչ կենաց անդէն մըռընչելով փըչէին:
Ըզբանակն՝ այրուձիոյն իբրև ետես Կըրէոն՝
Ի պարտութիւն մատնեալ, զնիզակն անդրէն՝ի բուռն ապշոպեալ
Ընթացաւ, մինչև իւրոցըն վըհատեալ՝ի յոգիս:
Եւ երբեք ըզքաւ ոչ Թեսեւս յուժոյն ու՝ի մըտաց,
Այլ ուղիղ վարգէր զպայծառ արկեալ զանձամբ զասպազէնն
Եւ զողջոյն ճամբարն ընդ մէջ հերձեալ աՀեղ նախճըրօք
Սատակեալ, և կամ ինքեանք անկանէին դիտապաստ.
Եւ ուժգին աղաղակաւ միմեանց պատուէր զայս տային,
« Ըզնիզակն հար՝ի մարմինս Երիքթիդեանց և վարեա »:
Գումարտակն այն յատամանց սերեալ օձի վիշապին
Էր աՀեղ քաջակռիւ, քանզի բեկեալ փըլուզեալ
Ըզձախոյ թև, այլ յաջոյ անտի թևոյն կորակոր
Դառնային փախըստական, և քաջք ընդ քաջս հաւասար.
Գովութեան յայնժամ արին Թեսեւս լինէր արժանի,
Զի ոչ ըզյաղթութիւն շահեալ եւեթ ելանէր՝
Այլ՝ի թև անդ բանակին իւրոյ սըանայր բեկելոյն,
Եւ հընչիւն արձակէր մեծ՝ մինչև գետնոյն դըղըրդել.
« Ո՛վ մանկտի, թէ զինուց ոչ կարասջիք հանդարտել
Որերոյն Սպարտացւոց, Աթէնք ողջոյն ջընջեցաւ »:
Ընդ բոլոր Դանայեցւոց բանակն աշխոյժք վառեցան:
Իսկ ինքնին զեպիդաւրեան սաանձնեալ ըզզէնս հաստաբեստ,
Ըզբարսամանց՝ ճօճեալ շարժեալ զերդ պարսատիկ՝ի կըշիռ,
Կառափունս համանգամայն պարանոցօքըն հընձէր:
Ի փախուստ հուսկ ուրեմն նոքա ընդ կրունկ դառնային:
Առ խընդլին ես գոչէի և պար դոփեալ բերկրէի:
Եւ հարեալ ծափ ըզծափի, նոքա՝ի դրունս սուրհային
Աղաղակ և խըղղուըրտին տարածանէր ընդ քաղաքն
Մանկըտւոյ և պառաւանց. և ըզսաճարս լընուին
Առ աՀին. կայր Թեսեւս՝ի պարըսպաց արտաքոյ
Եւ իշխէր ոչ մըտանել, զի ոչ յաւեր քաղաքի,
Այլ զինքեան ասէր գալուստ առ՝ի թաղել դիականց:
Զօրավար զայս օրինակ պարտ է ընտրել բանակի
Որ՝ի վիշտըն ձախողակս իցէ արի անսասան,
Խորշեսցի՝ի սոնքանաց ժողովըրդեան երջանկի
Որ՝ի ծայր սաստիճանին ելեալ պատուոյ և շըքոյ՝
Ի ձըկտել յանչափս՝ կորոյս և յոր մարթէր վայելել:

ՊԱՐ

Աւասիկ յանկընկալ յօրս այս անյոյս ակնարկեալ,
Հաւատամ ես յաստուածս, և ըղձարեաց խմոց բեռն՝
Նըւաղեալ տեսանեմ յոյժ 'ի տաղայնու ըղձերէժս:

ԱԴՐԱՍՏՈՍ

Ո՛վ դէք, առ ի՞նչ հէք մահկանացուք պանծանան
Ունել միտս իմաստունս. զի առ 'ի քէն կախեալ կամք.
Եւ զոր կամք քո կամիցին՝ զայն լոկ գործել ժըպըրհիմք:
Զի սաստիկ յայնժամ ցասուցմն զինև անկեալ կայր Թախիծ,
Ցոգնամթիւ էին նոքա, հաստաբազուկք և ուժով.
Այլ երբև խաղաղութեան դաշինս կըռել յօժարէր
Ըղձափոյս Ետէոկլէս, ոչ յանձն առնուլ կամեցաք
Եւ ահա կորընչիմք. իսկ որ յայնժամ բարեբաստ
Ցանկարծոյն մըթերս կուտեալ երբև աղքատ ոք յընչից
Ոտընհար եղև, ապա և ինքն անդէն դըժձեցաւ
Սնըզգամ կադմեան ժողովն. ո՛վ ընդունայն մահացուաց,
Որ ըստ չափ անհընարին քարշեալ ըզլար աղեղան՝
Ցիրաւի բազմադէմ չարեօք իցէք ըզգածեալ:
Սիրելեաց չըդնէք ունկն, այլ լոկ բաղդին դիպուածոյ:
Ո՛վ քաղաքք, որ ըղձարիս գիտէք բանիւ ամոքել,
Ի սուսեր զայն աւանդէք, և ոչ բանիւ, ըզմարթանս:
Եւ առ ի՞նչ ձըգեցայ յայս. զայս կամ է ինձ գիտել լոկ,
Թէ զիա՞րդ ապրեցար դու. ապա և զայլս ի՞նչ հարցից:

ՀՐԵՇՏԱԿ

Ըզքաղաքն յորժամ շաչէին զինուց ուժգին դըղըրդէր՝
Ընդ դըրունս ոստեայ 'ի բաց՝ ընդ որ բանակն տայր դըռոյթ:

ԱԴՐԱՍՏՈՍ

Եւ զորոց էր գուպարած՝ ածե՞ր ընդ քեզ ըզմեռեալս:

ՀՐԵՇՏԱԿ

Որք եւթանց վերակացու էին շըքեղ բանակաց:

ԱԴՐԱՍՏՈՍ

Զի՞նչ են բանքդ. ուրանօ՞ր կայ անկելոցն այլ ամբոխ:



ՀՐԵՇՏԱԿ

Ի թաղումն եդան 'ի խնձս Կիթերոնի և 'ի գոգս:

ԱԴՐԱՍՏՈՍ

Ցա՞յս կոյս թէ յա՞յն ի՞նչ լերին. և ո՞ զնոսին որ թաղեաց:

ՀՐԵՇՏԱԿ

Թեսևս. և վայրն ուր կայ Եղեւթերիս հովանուտ:

ԱԴՐԱՍՏՈՍ

Եւ ո՞ւր 'ի մեռելոց զանթաղ թողեր դիակունս:

ՀՐԵՇՏԱԿ

Առ երի. զի փոյթ ի՞նչ զամենայն ջան ածէ յանդ:

ԱԴՐԱՍՏՈՍ

Ո՛հ, արդեւք թէ 'ի չիրմէն հանին ծառայքն անողորմ:

ՀՐԵՇՏԱԿ

Ի գործդ այդ ոչ ոք եղև 'ի ծառայից ձեռներէց,
Թէ տեսեալ էր՝ ասէիր թէ դա սիրէ ըզմեռեալսն:

ԱԴՐԱՍՏՈՍ

Ըզնոցա մարմինս արդեւք լուառականաց լըւացա՞ւ:

ՀՐԵՇՏԱԿ

Անկողինս տարածեաց, ծածկոյթ եած ըզմարմնովք:

ԱԴՐԱՍՏՈՍ

Դըժընդակ պաշտօն հարկին, և որ յամօթ արկանէ:

ՀՐԵՇՏԱԿ

Ո՞ր ամօթ իցեն մարդկան՝ վիշտք իրերաց և արկածք:

ԱԴՐԱՍՏՈՍ

Քանի՞ս ես ընդ նոսին ըղձանայի մեռանել:

ՀՐԵՇՏԱԿ

*Տարապարտ աշխարես, ածես արտօսր և կանանց ։*

ԱԴՐԱՍՏՈՍ

*Նոքին իսկ կարծեմ թէ են ինձ վարդապետք արտասուաց ։ —*
*Մեռելոց գնալ՚նդ առաջ, ըղձեռս ՚ի վեր ամբարձեալ՝*
*Զարտասուաց հեղուլ հոսանս և աշխարանս հեծեծել,*
*Զսիրելիս կարդալ կամիմ՝ յորոց թափուր եղկելիս,*
*Միայնակ լամ և կոծիմ. զի այս ևեթ գոյ մարդկան*
*Կորուսեալ զոր միանգամ ոչ ևս բերցէ ՚ի բըռին՝*
*Ըղհոգի կենդանաբեր. այլն ամենայն՝ գիւրին է ։*

ՊԱՐ Ա.

*Օր երջանիկ և ողխոյր,*
*Փառք և պարծանք քաղաքին,*
*Զօրավարաց ճակատուս՝*
*Երկպատական յաղթանակ.*
*Այլ դառն է ինձ տեսանել*
*Յանչուինչ որդւոց դիակունս ։*
*Ըղձանչելի այս տեսիլ,*
*Տեսից զանյոյս տըւընջեանն՝*
*Քանզի հարայ ՚ի մեծ ցաւ ։*

ՊԱՏԱՍԽԱՆԻ ՊԱՐՈՒՆ Ա.

*Հայրն հինաւուրց՝ ժամանակ,*
*Իցիւ պահէր զիս ցայսվայր*
*Յաւէտ առանց զուգութեան ։*
*Զի՞նչ ինձ օգուտ յորդեկաց.*
*Կըրել ինչ ոչ յուսայի*
*Կիրս ընդունայն և ՚ի զուր՝*
*Յամուսնութիւն ոչ լըծեալ ։*
*Յայտնի արդ վիշտ տեսանեմ՝*
*Անզաւակիլ սիրելեաց ։*
*Այլ արդ զմարմինս նըշմարեմ*
*Գըռնացելոց որդեկացս .*
*Տա՛յր ինձ՝ նդ որդիս իմ գնալ՝*
*Եւ իջանել ՚ի դըժոխս ։*



ԱԴՐԱՍՏՈՍ, ԹԵՍԵՒՍ՝ ընդ հովանաւորեան պատգարակաւն որ հոր- յեալ բերեն զդիականս եօթանց զօրականաց.

ԱԴՐԱՍՏՈՍ

*Աշխարանս, ո՜վ դուք մարք,*
*Ի ստորմիս մեռելոց՝*
*Ողբացէք, կըրկնեցէք*
*Հեծութեանց իմ զանգիւնս ։*

ՊԱՐ

*Ո՜վ մանկտի, մարց սիրուն*
*Ո՜վ յորջորջումն դառնութեան,*
*Ըղքեզ մեռեալդ իմ, կարդամ ։*

ԱԴՐԱՍՏՈՍ

*Ա՜հ, ա՜հ ։*

ՊԱՐ

*Վա՜շ չարեացս՝ որ հասին ։*

ԱԴՐԱՍՏՈՍ

*Ա՜հ, ըզքեալս . . . . .*

ՊԱՐ

. . . . . . . .

ԱԴՐԱՍՏՈՍ

*Ո՜հ վըշտացս ։*

ՊԱՐ

*Կըրեցի, ո՜հ, զդառնագոյնն ։*

ԱԴՐԱՍՏՈՍ

*Ո՜վ քաղաք արգոսական, ըզբաղդ իմ ո՞չ տեսանես ։*

ՊԱՐ

*Տեսանէ և զիս ըղհէքս՝*
*Անզաւակ գոլ յորդեկացս ։*

ԱԴՐԱՍՏՈՍ

*Ածէք այսրէն ըղհիքացեալ*
*Արիւնըռուշտ մարմնոց իրանս,*
*Յանարժանից զուր մեռեալս ։*

ՊԱՐ

Տուք 'ի գիրկս իմ բազկաց
Պընդել զնոսին ըզկըրծովքս ,
Եդից 'ի գոգս իմ զորդիս :

ԱԴՐԱՍՏՈՍ

Ահա որդեակքդ :

ՊԱՐ

Որպիսի՜ յոյժ ծանրաբեռն :

ԱԴՐԱՍՏՈՍ

Ո՛վ վատշըւէրք :

ՊԱՐ

. . . . . . . . . . . .

ԱԴՐԱՍՏՈՍ

Իմոյ ձայնիս լըւարուք :

ՊԱՐ

Աշխարհս արդ զերկոցունց իսկ ըզվիշտ :

ԱԴՐԱՍՏՈՍ

Իցէ՜ թէ իմ 'ի գընդից կադմեանց անկեալ էր տապաստ :

ՊԱՐ

Անփորձ թէ լինէր մարմինն իմ առն անկողնոյ :

ԱԴՐԱՍՏՈՍ

Ի ծով վըշտացս , ո՜վ դուք մարք ,
Հայեցարուք , եղկելիք :

ՊԱՐ

Ակօսեալ այտք մեր եղընգամբք ,
Ցանեալ փոշւովք ըզգըլուխս :

ԱԴՐԱՍՏՈՍ

Կըլանիցէ զիս երկիր ,
Մըրրիկ ընդ օդս հանցէ զիս ,
Շանթ աստուծոյն հարցէ զիս :



ՊԱՐ

Ի գառն ածար անկողինս ,
Հակառակ քեզ պատգամք գից ·
Աշխտաբեր Կատաղին՝
Զիդիպոսի թողեալ տուն
Ցարձակեցաւ 'ի քո յարկ :

ԹԵՍԵՒՍ

Հարցանել ձեզ կամ էր ինձ զորմէ կոծիքդ արտասուօք .
Այլ թողեալ ըզձեզ 'ի վիշտս՝ հարցից ինքնին զԱդրաստոս .
Ո՛ք ոմանք մեծահոգիք էին սոքա հոյակապք ,
Ո՞ւստ ուստեք 'ի մարդկանէ , ոգեա 'ի մէջ պատանեաց
Քաղաքիս իմաստնագոյնդ , որպէս իցես իսկ գիտուն :
Զարութիւնս տեսի նոցա անճառելի քան ըզբան ,
Ցանդըգունք՝ որոց եդեալ էր քաղաքին տիրանալ :
Ոչ անշուշտ ծիծաղեսցիս զինեւ թէ ինչ մի հարցից ,
Ո՞ւմ անցնիւր ոք 'ի սոցունց եւ ախոյեան 'ի կըռուի ,
Կամ յումմէ վէրս գեղարդեան 'ի թըշնամեաց խոցեցաւ :
Բանք ունայնք են այսոքիկ 'ի լուր առողջ ականջաց ,
Զի զիա՞րդ՝ որ 'ի ռազմին խառնեալ կայցէ գիրկընդխառն՝
Զառաջեաւ աչաց ըստէպ թըռիչս տեսեալ նիզակաց ,
Ի վերայ հասցէ ճըշդիւ թէ ո՛ հըզօրն 'ի նոսա :
Զայսոսիկ և ոչ գամ մի հարցանել իշխեցի ,
Ոչ բանից իսկ զրուցողաց հաւատայի ինչ արդեւք :
Զի հազիւ ըզկարեւորս թէ տեսանել կարիցէ
Որ ընդդէմ կայցէ կարգեալ իւր ոսոխին հանդիպոյ :

ԱԴՐԱՍՏՈՍ

Ունկըն դիր այսուհետեւ . քանզի և ոչ յակամայ
Ի խօսել յորդորես զիս , զի ես ինքնին իսկ կամիմ
Ըզսիրուն բարեկամաց զարդար ոգեւ դըրուատիս :
Տեսանես անդ ըզհըզօրն՝ որ 'ի նետէ շանթահար ,
Դա ինքնին է Կապանեւս՝ այր բազմաճոխ ընչաւէտ ,
Ցօրացեալ ոչ պերճանօք իմաստութեան իսկ մասամբ՝
Քան զայր ոք աղքատին ոչ ինչ ունէր աւելի :
Ի սաստիկ մըըզգայլելոյ 'ի մեծ խընճոյս՝ ըզգուշ կայր ·
Զքաւականն անարգէր . զի ոչ ասաց՝ ըզբարի
Ի կերակուրս , և ըզչափոյս պարկեշտութեան 'միշտ՝ պաշտեաց :

Բարեկամ էր ճըշմարիտ հեռաւորաց և որ մերձ,
Անպաճոյճ և 'ի բարուց, քաղցրահամբոյր և ողջք,
Առ ծառայն ոչ լինէր ընդհատ որպէս առ այլս որերոյն: —
Զետէոկլ առեմ երկրորդ՝ յայլ լաւութիւնս անձնատուր,
Փառասէր էր դա մանուկ և պարենիւ չըքաւոր,
Նա յերկրին արգիական պատիւս բազում ըստացեալ:
Ի բաշխել բազում անգամ Նըմա ոսկւոյ սիրելեաց՝
Ոչ առնոյր յանձն երբեք, որպէս զի մի ըզբարոյս
Վարեսցէ 'ի ստրկութիւն՝ անկեալ ընչիցն ընդ լծով:
Զանպիտանս 'ի մարդկանէ, ոչ ըզքաղաք գըլխովին՝
Ատեայր Նա, զի ոչ լիցի քաղաք պատճառք ինչ չարեաց.
Եթէ ոչ չար համբաւով իշխան յոռի ունիցի: —
Իսկ երրորդ Իպպոմեդոն 'ի սոցանէ կարգեցաւ.
Ի մատաղ անդուստ տիոց ոչ 'ի գըրգանս հեշտանէր
Հեշտութեան, կամ 'ի լոյծ վարուց փափուկ ցոփութիւնս:
Ի վայրի ընականայր, տայր զինք խոշոր ինչ կենաց,
Ցարութիւն զանձըն վարժէր, որսոց լինել հետամուտ.
Փըռընչէր երիւարօք, ձեռօք քարշէր լի զաղեղն.
Շայեկան մատուցանել ըզձայր զմարմին՝ քաղաքին: —
Իսկ միւսն Ատալանտեայ որսասիրի է ծընունդ,
Մանուկ Պարթենոպէս, հրաշատեսիլ կերպարան.
Ի ծընէ արկադացի, եկեալ յափունս Ինաքայ՝
Ի յԱրգոս սընանէր. 'ի կիրթ վարժեալ անդանօր՝
Որպէս առն օտարական արժան է նախ պանդըխտել,
Ոչ բեռն էր քաղաքին և ոչ ումեք յաչաղեալ,
Ոչ բանից կագազարթոյց՝ յորմէ անշուշտ այր օտար
Ատելի լիցի համակ որպէս բընիկ քաղաքին:
Բանակաց եղեալ գըլուխ՝ իբրև ծընունդ արգիացի,
Մարտընչէր յերկրին վերայ. 'ի պերճանալ քաղաքին՝
Ի սըրտին խընդայր, ապա 'ի ձախողանս՝ տըխատէր:
Տարփելիք բազումք էին Նորա յազգէ և կանանց,
Ցոր ամբիծ ըզսըրբութիւն պահէր անխախտ 'ի յոգւոջ: —
Ի կարճոյ և ըզՏիդեայ պարծանս եդից մեծամեծս.
Ոչ 'ի խօսս էր հոյակապ՝ այլ յասպաշէն առնութեան,
Իմաստուն հընարագիւտ՝ որ առեղծանէր բան բազում.
Ի հանճարն էր պակասեալ քան զեւրն եղբայր Մելագրոս,
Ի համբաւ քաջութեան զինուց Նըմին հաւասար,
Որ ըզպերճ և զճըշգրիտ հնարեաց արուեստ զինական,



Ի բարուց էր փառասէր և զգօնամիտ խոհական: —
Ի բանից աստի յապուշ հարցիս Թեսեւս սըխրացեալ.
Ցառաջոյ աշտարակաց խիզախեցին այսք 'ի մահ:
Նա ամօթ իսկ 'ի վերայ ամէն բարի հըրահանգք ·
Քաջագործ այր զամօթի հարեալ դընի Նըշաւակ՝
Թէ վատթար երեւիցի. զի քաջութիւն իսկ մարդէ,
Զերդ մանուկ տըխեղծ զուսումն որոց չգիտեն՝ վարժիցի,
Զի գիտէ անվըթար կալ 'ի յոգւոջ զոր ուսաւ
Ցաւագոյթ. այսպէս քաջ զորդեակս, ո՛վ հարք, սընուցէք:

ՊԱՐ

Ո՛վ որդեակ, ծընունդ թըշուառ.
Երկամբք յըղւոյ՝ յարգանդիս
Տարայ ըզքեզ մեծ ցաւովք.
Արդ ըզպըտուղ իմ վըշտացս
Առ և գընաց տարտարոս:
Զունիմ ինձ զոք ծերատած
Մայր հէք ծընող որդեկիս:

ԹԵՍԵՒՍ

Ըզզաւակ քաջակորով և պանծալոյն Ոյիկլեայ,
Կենդանեաւ 'ի ստորինս չորթեալ տարեալ աստուածոց
Ինքնին քառաձիովք՝ ըզքեղ լընուն դըրուատեօք:
Ըզզուարթն Իփիոսի, զՊօլինիկեայ բարբառիմ,
Զոր արժան է ճըշմարտիւ գովել անսուտ պանծանօք:
Ասպընջական էր ինձ Նա մինչև լըքեալ ըզԹեբէս
Փախըստեամբ կամակարուց գընալ յաքսոր 'ի յԱրգոս: —
Գիտիցեմ թէ զի՞ զոսա առնել կամիմ աստանօր:

ԱԴՐԱՍՏՈՍ

Ըզմի զայդ գիտեմ միայն՝ հընազանդել բանից քոց:

ԹԵՍԵՒՍ

Ըզհրով շանթահարեալն յԱրամազդայ Կապանեւս...

ԱԴՐԱՍՏՈՍ

Մեկուսի՞ յայլոց կամիս թաղել ըզդին Նուիրական:

ԹԵՍԵՒՍ

Այո, և զճենացեալս 'ի մի հըրատ խարուկել:

ԱԴՐԱՍՏՈՍ

Եւ ո՞ւր ամբառնայցես նըմա շիրիմ զատուցեալ:

ԹԵՍԵՒՍ

Առ Նոքիմբք ապարանիւք, զետեղեցից անդ շիրիմ.
Ծառայից արբանեկաց հոգ խընամոյ լիցի դա,
Իսկ նոքա առ մեզ յանձն. գագաղքն յառաջ մատիցեն:

ԱԴՐԱՍՏՈՍ

Եկա՛յք աղէ, մա՛րք չքնաղք, մերձեցարո՛ւք յորդիս ձեր:

ԹԵՍԵՒՍ

Ո՛չ, արդեօք, Ադրաստէ, ոչ ինչ 'ի դէպ ասես զայդ:

ԱԴՐԱՍՏՈՍ

Եւ զի՞արդ. չիցէ՞ արժան մարց զիւր որդիս շօշափել:

ԹԵՍԵՒՍ

Ի տեսիլ մոխրեալ մարմնոց անկանիցին նըւաղեալք.
Առ իմէ՞ և զայս թախիծ ցանկաս նոցա յաւելուլ:

ԱԴՐԱՍՏՈՍ

Յաղթեցեր, Թեսեւս. ասաէն կացցեն կանայք տառապեալք.
Ի խարոյկ յորժամ դիցուք, կանայք, զմարմինս մեռելոց,
Զոսկրոտին տարայք 'ի բաց, — ո՜վ հեքացեալ մահացուք.
Առ ինչ 'ի զէն մի՛շտ վառիք՝ միմեանց արեամբ ծարաւի.
Դըլացէք, դադարեցէք, 'ի վաստակոց հանգերո՛ւք.
Քաղաքի լերո՛ւք պաշտպան, խաղաղու թեան անդորրու.
Կեանք մարդոյ՝ դոյզն ինչ է. պարտ է հեշտեաւ վարել զայն:

ՊԱՐ

Ոչ քաջորդի, քաջազաւակ,
Ի բարեբաստ կենաց անման
Մանկածընունդ արգելուհեաց.
Ոչ Արտեմիսըն ծընուցիչ
Բարբառեցի առ անորդիս.
Տառապագին կենացս պայման.
Իբրև ամպոյ պէս ցիր և ցան՝
Ի մըրրկայոյզ հողմոց վարեալ:



ՊԱՏԱՍԽԱՆԻ

Նւթեանք եօթեանս ծընաք որդիս
Քաջազարմիկ յարգիացիս.
Արդ անորդի և անզաւակ
Զառամացեալ եմ ես պառաւս.
Ոչ 'ի համար ինչ գնացելոց
Եւ ոչ թըւեալ 'ի կենդանիս.
Ո՞ր բաղդ է ինձ հասեալ վիճակ:

ՄԱԿԵՐԳ

Մընան և եթ արտասուք
Ինձ եղկելւոյս. և 'ի տան՝
Դամբան մանկանս կայ արձան.
Ա՛յս յուշարարք որգաւոր,
Եւ ծամք վարսից գանգրահերք,
Նըւէրք դիոց անչընչից.
Աշխտակոծ լալականք՝
Զոր ոսկեվարսն Ապոլոն
Ապախտ առնէ զըլացեալ:
Առաւօտէնա յայնժամ,
Ըզպարեգօտն ես առ կուրծս
Պընդեալ կըրկին խոնաւուտ,
Ոռոգեցից արտասուօք:
Անդ ըզխարոյկ նըշմարեմ
Նըւիրական Կապանեայ,
Եւ գահամուծս մեռելոց
Յապարանից Թեսեւսի.
Եւ չանթահար մեռելոյն
Մերձ գՆուագնէ կինն շըքեղ,
Զոր սերմանեաց Իփիս ալեւ:
Ընդէ՞ր 'ի ժայռն օդային
Ել 'ի կատար, և եկաց:

ԵՒԱԴՆԷ 'ի վերայ բարձրաւանդակէ. ՊԱՐ.

ԵՒԱԴՆԷ

Զի՞նչ ճառագայթս, զո՞ր նըշոյլ
Կառավարեաց օրըն այն.
Զահ ընդ եթեր էր լուսին,

Յաւերժհարսամբք երազոտն՝
Զխաւորեալ ընդ մըռայլս.
Իմոց յայնժամ հարսանեաց,
Յաւէժական խընծղանաց՝
Արձանացոյց երգս Արգոս,
Պըղընձազէն Կապանեայ։
Վըտարանդի 'ի տանէ
Արդ մոլեգնեալ զերդ շամբուշ
Ի բոց հրատին ընթանամ
Վազեմ 'ի նոյն գերեզման.
Զերկունս լուծեալ 'ի գըժոխս
Զյաւիտենից տառապանս։
Քաղցրագոյն է մահ անշուշտ,
Գոլ սիրելեաց մահակից,
Թէ աստուածոց է հաճոյ։

ՊԱՐ

Տեսանեմս ահա զխարոյկ՝ յոր կաս ելեալ 'ի դըրունս,
Գանձարան Արամազդայ, ուր պարփակեալ է քոյին
Ամուսինդ՝ 'ի շանթային փայլատականց ընկլճեալ։

ԵՒԱԴՆԷ

ՊԱՏԱՍԽԱՆԻ

Ի բարձանց ատի
Ըզմահս տեսանեմ.
Այլ բաղդն իմ ոտիցս
Եղև առաջնորդ.
Արութեամբ ոգւոյ՝
Վազեցից ոստմամբ
Յապառաժ վիմէն
Ոստուցեալ 'ի հուրն.
Ի բոցխառնաշէկ
Խառնեցայց սիրուն
'Նդ ամուսնոյս մարմնոյ
Գիրկ ընդ գիրկ պընդով.
Ի Պերսեփոնեայ
Երթայց հարմնարան.
Եւ ոչ 'ի մահուն



Անջատայց 'ի քէն։
Ողջոյն անկողինք
Ողջոյն և արևս.
Ի մանկունս արգեանց
Իցեն սուրբ աղերսք։
Ծընկասէր փեսայ
Սուրբ սիրով տարփեալ
Յօդեսցի անքակ
Ընդ իւրում հարսին։

ՊԱՐ

Աւասիկ սա ինքնին հայր քո եկեալ մատչի աստ
Ծերունին Իփիս՝ նորոց իրացս այսմիկ 'ի խընդիր.
Զոր լուեալ անշուշտ 'ի սիրտ իւր խոցեսցի կարեվէր։

## ԻՓԻՍ, ԵՒԱԴՆԷ, ՊԱՐ.

ԻՓԻՍ

Ո՛վ թըշուառ, և ես ինքնին թըշուառագոյն ծերունիս,
Ի կըրկին համակեալ սուգ եկեալ կամ աստ առ 'ի դիցս.
Ըզմեռեալ որդին կադմեանց սըրախողխող պատանին
Զէտէոկլ 'ի հայրենիս կամիմ անդրէն աւանդել.
Եւ ըզդուստր իմ որոնեմ, որ չէր լինեալ 'ի տանէս
Ընթանայր ոստոստելով հաւանընկերն Կապանեայ,
Ընդ նըմա ցանկայր ըզմահ. զի յառաջմէ վաղագոյն
Պահէի ըզնա 'ի տան. այլ 'ի չարեացս հասանել
Թողլ ետու պահպանութեան, 'ի բաց չոգաւ փախըստեայ.
Աստանօր կարծեմ թէ է, գիտէք անշուշտ, դուք կանայք։

ԵՒԱԴՆԷ

Զի՞նչ սոցա հարցանես. 'ի ժայռիս աստ աւասիկ
Թըռչնոյ հանգունատիպ 'ի խարուկին Կապանեայ
Վերամբարձ ողորմելիս թեթևացեալ կամ, ո՛վ հայր։

ԻՓԻՍ

Ո՛վ որդեակ. զի՞նչ է հողմս, զի՞նչ պատմուճանք, և առ ի՞նչ,
Ըզտուն թողեալ 'ի յերկիրս աստ փախուցեալ հասեալ կաս։

ԵՒԱԴՆԷ

Խորհըրդոց իմոց արդեւք՝ լուեալ հասու լինիցիս.
Այլ լսել քեզ առ յինէն զայս ոչ կամիմ, ո՛վ հայրիկ։

ԻՓԻՍ

Եւ զիա՞րդ, ո՞չ արդար իցէ գիտել զայս հօր քոյ։

ՆԻԱԴՆԷ

Դատաւոր ոչ իմաստուն իմոց մըտացս լինիցիս։

ԻՓԻՍ

Աւաղելիք սեթևեթիւք զմարմինդ ընդէ՞ր պըճնեալ ես։

ՆԻԱԴՆԷ

Այդպիսի փերեւերտանք չըքնաղ ինչ, հայր, գուշակեն։

ԻՓԻՍ

Ընդ մեռեալ ամուսնոյդ մի՞ ըղձարեալ ինչ իցես։

ՆԻԱԴՆԷ

Ի գործ մի սքանչելի կազմ և պատրաստ եմ ահա։

ԻՓԻՍ

Առ իմ՞ կաս մերձագոյն այդր 'ի խարոյկ ու 'ի շիրիմ։

ՆԻԱԴՆԷ

Քաջայաղթ ես ատանօր երևեցայց արութեամբ։

ԻՓԻՍ

Որպիսի՞ յաղթութիւն տարեալ, կամիմ ուսանել։

ՆԻԱԴՆԷ

Կանանւոյն բոլորեցունց, որոց զարև տեսանեն։

ԻՓԻՍ

Արդեամբք Աթենասայ, թ' իմաստութեան խորհրդովք։

ՆԻԱԴՆԷ

Արութեամբ զի ընդ առն իմում հանդերայց մահակից։

ԻՓԻՍ

Զի՞նչ խօսիս. զի՞նչ առեղծուած օտարոտի ինձ ասես։

ՆԻԱԴՆԷ

Սըլացայց 'ի խարոյկ իմ սիրելւոյն Կապանեայ։



ԻՓԻՍ

Ո՛վ դուստր իմ. մի զայս հանդէպ ամենեցուն բարբառիր։

ՆԻԱԴՆԷ

Զամենայն Արգիացիս կամիմ գիտել զայսոսիկ։

ԻՓԻՍ

Այլ գործել զայս անհընար է ինձ թողուլ քեզ բընաւ։

ՆԻԱԴՆԷ

Ի զուր. և ոչ ըղձեաս իմ կարասցես արգելուլ.
Մարմին իմ ահաւասիկ. թէպէտ չիցէ քեզ սիրուն,
Եւ ոչ ինձ և ոչ 'ի հուր աճիւնացեալ ամուսնոյս։
( Արշաւէ վիմէն 'ի խարոյկ Կապանեայ առն իւրոյ )։

ԳԱՐ

Քանի՜ն զըժընդակ գործ ժըպըրհեցար, ո՛վ կին դու։

ԻՓԻՍ

Կորեայ չըւառականս, Արգիացւոց ո՛վ դըստերք։

ԳԱՐ

Է՛ է. ինձ ցաւագնոյս,
Սարսափելի տեսի գործ։

ԻՓԻՍ

Ոչ զայլ ոք խօլագոյն քան զիս գտանել մարթասջիք։

ԳԱՐ

Ո՛վ եղուկդ. դու Իդիպեայ
Բաղդին եղեր բաժանորդ,
Եւ դու քաղաք իմ վատթար։

ԻՓԻՍ

Ո՛հ զիա՞րդ չիցէ մարթ և այս հընարք առ մարդկան,
Երկիցըս մանկանալ և ծերանալ միւսանգամ։
Զի թէ ինչ յառաջագոյն բարեաւ չիցէ աջողեալ՝
Յերկրորդում ապա նուագի ուղղեալ կարգեմք գեղեցիկ.
Ոչ այսպէս և կեանք մարդկան. եթէ էաք մանկացեալ
Երկրորդուստ և ծերացեալք, և թէ ոք ինչ սըխալէր՝

Ի կորկին կենաց դիպեալ՝ զայն ուղղեաք արդարև :
Զի տեսեալ իմ զայլ մարդիկ՝ որդիս ծնանել և սերել՝
Ցանկացայ ունել որդիս և ծիւրէի առ սիրոյն :
Թէ հընար էր ինձ յառաջ ըզփորձ առնուլ հեծութեանց
Զոր հայր ոք ըզգայցէ յիւրոյ որդւոյն մեռանել,
Ի չարիս ինչ այսպիսի չէր իմ լինել ձեռնամուխ .
Մանուկ մի հրաշալի սերմանեցի յաշխարհի ,
Այժմիկ ահաւասիկ 'ի նըմանէ եմ Թափուր :
Զի՞նչ արժան է եղկելւոյս այսուհետև գործել ինչ:
Դարձ 'ի տո՞ւն իմ արարից . զամայութիւն անդ տեսից
Յոգնահոյլ սենեկաց , և տառապանք կենցաղոյս .
Թէ 'ի յարկս այն Կապանեայ 'ի խորս գընալ իջանեցից .
Քաղցրագոյն էր անդ երբեմն յառաջագոյն դըստրիկն իմ.
Ոչ ևս է նա , որ 'ի շըրթունս զայտս իմ հըպեալ մածանէր ,
Ըզգըլուխ իմ շօշափէր. զի հօր ումեք ծերունւոյ
Քան ըզդուստր չիք ցանկալի . զի ուստերաց են ոգիք
Ի մեծամեծս քաջադէպք , և ոչ քաղցունք 'ի գըգուանք : —
Հի՞մ փութով զիս ոչ արտաքս հանէք աստի յապարանս .
Դիք 'ի վայր խաւարչտին , զի անսըւաղ անճաշակ՝
Ըզհնացեալ մարմինս ծիւրեալ՝ խաւարըպատուռ կորիցեմ:
Յուսկերաց որդւոյս իմոյ զի՞նչ ինձ օգուտ գործիցի:
Ծերութիւն դըժոխըմբեր , ո՜րչափ ատեամ ես ըզքեզ .
Ատեամ իսկ և ըզնոսա որ զկեանս ծըգնին յերկարել՝
Ըմպելեօք և անկողնօք և ըզձութեանց հըմայիւք .
Զի պարտ էր իսկ նոցա՝ յորժամ չիցեն ինչ 'ի պէտս՝
Կորընչել երթալ մահուամբ , մանկանց խափան մի՛ լինել :

ՄԱՆԿՈՒՆՔ ԱՐԳԻԱՑԻՔ՝ որ բարձեալ բերեն ոսկերս հարց իւրեանց .

ԹԵՍԵՒՍ , ԱԴՐԱՍՏՈՍ , ՊԱՐ .

ՊԱՐ

Մանկանց ահա , մեռելոց
Ոսկերք . բարձէք , աղախնայք ,
Ըզկըթուցեալ ծերունիս ,
Զի 'ի սըգոյ որդեկաց՝
Գընաց 'ի մէնջ զօրութիւն ,
Ժամանակաց բազմութեամբ
Յածախագոյն և վըշտօք :



Զի՞նչ մեծագոյն քան զայսչկիրս
Ի մահացուս կըրիցի :

ՄԱՆՈՒԿ ՈՔ

Կըրեմ կըրեմ, հէք մայրիկ ,
Ի խարուկէ զանդամս հօր ,
Առ 'ի ցաւոց ծանրաբեռն ,
Զբոլոր խառնեալ 'ի մի կոյտ :

ՊԱՐ

Արտօսր ածես , վա՜յ ինձ , վա՜յ ,
Կորուսելոց մօրն 'ի սուգ .
Ի դոյզն մոխիր ամփոփին
Մարմինք քաջացն 'ի Միկենս :

ԱՅԼ ՄԱՆՈՒԿ

ՊԱՏԱՍԽԱՆԻ

Բա՜բէ , Թափուր 'ի հօրէ ,
Որբ՝ յամայի նըստայց տան ,
Ոչ ծընողիս իմ 'ի ձեռս :

ՊԱՐ

Ո՞ւր են վաստակք իմ որդւոց ,
Ո՞ւր հոգք հըսկումն խընամոյ ,
Եւ մօր սընունդք, անքուն աչք ,
Սիրուն գըգուելն երեսաց :

ԱՅԼ ՄԱՆՈՒԿ

Մեռան որդիք քո , ո՜վ մայր ,
Զըւեալ գնացին ընդ եթեր .
Լուծեալ յաճիւն 'ի հըրոյ՝
Թռուցեալ իջին 'ի դըժոխս :

ԱՅԼ ՄԱՆՈՒԿ

Լըսես զորդւոց ըզձայս , հայր .
Ասպար 'ի ձեռս իմ առեալ՝
Ըզվըրէժ հօրս խընդրեցից :

ՊԱՐ

Եղիցի այդպէս , մանուկ :

ԱՅԼ ՄԱՆՈՒԿ

ՊԱՏԱՍԽԱՆԻ

Արդարութիւն հասցէ ինձ.
Արդեւք նընջէ՞ նըշխըն իմ:

ՊԱՐ

Վիշտ մեծաբերան կայ զինեւ:

ՄԱՆՈՒԿ

Պըղընձազէն Դանայեանց
Զօրագըլուխն իջէ ինձ
Վըրէժխընդիր արեան հօր:

ԱՅԼ ՄԱՆՈՒԿ

Ըղձայր իմ առաջի
Աչացս թըւիմ տեսանել:

ՊԱՐ

Ցայտըն համբոյր ինչ տըւեալ:

ՄԱՆՈՒԿ

Բանիցդ մըթերք բազմակոյտ
Վայրավատին ցընդին յօդս:

ՊԱՐ

Ցաւըս կըրկին թողեր մօր.
Ոչ ցաւք երբեք հայրենիք
Ոչ քեցեացին 'ի սըրտէդ:

ԱՅԼ ՄԱՆՈՒԿ

Ճընշիմ ծանու այս բեռամբ:

ՊԱՐ

Ածէ զլանջօքս իմ զաճիւնդ.
Թողէք պընդել սիրատենչ:

ՄԱՆՈՒԿ

Ընդ լուր ձայնին արտասուեմ
Փըղձկեալ սըրտիւ առ ցաւոցս:



Մեռար, որդեակ, ոչ եւ ինձ մարթ՝
Պըշնուլ յերեսս մօր գողտրիկ:

ԹԵՍԵՒՍ

Ադրաստէ, և դուք կանայք յարգիացւոցըն զարմէ,
Ի մանկունս հայեցարուք՝ որ են բարձեալ յիւրեանց ձեռս,
Ըզնըշխարս սիրելեաց հարցըն իւրեանց ազնըւաց:
Այսոցիկ ընծայատուր եմ ես և քեզ, և քաղաքդ.
Ի յուշի դուք կալարուք զայս անմոռաց երախտիս:
Եւ յաճախ զայս յեղյեղեմ ամենեցուն ես ըզբան
Ի պատուի ըզքաղաքն ունել, և տալ զայն որդւոց
Ցուշարար յիշատակի՝ որոց գայցեն ըզկընի:
Արամազդ լիցի վըկայ և որ յերկինս են աստուածք,
Թէ զիա՛րդ մեծապատիւ եղէք 'ի մէնջ մեծարեալք:

ԱԴՐԱՍՏՈՍ

Զամենայն՝ զոր արութիւն ցուցեր յերկրին դու Արգեանց
Գիտեմք քաջ, ո՛վ Թեսեւս, ունիմք շընորհ անըսպառ.
Զի բարիս գըտեալ ումեք՝ պարտի անդրէն փոխարէնս:

ԹԵՍԵՒՍ

Զի՞նչ գործել արժան է ինձ առ օգտակար լինել ձեզ:

ԱԴՐԱՍՏՈՍ

Ուրախ լեր. զի արժանի ես դու և քոյդ իսկ քաղաք:

ԹԵՍԵՒՍ

Այպաքէն և դու նոցին վիճակեսցիս իսկ բաղդի:

ԱԹԵՆԱՍ (Ելնէ)

Լո՛ւր, Թեսեւս, Աթենասայ բանից անսա պատգամաց.
Զի՛նչ արժան առնել է քեզ առ 'ի նըպաստ քաղաքիդ:—
Ոչ փութով այսոցիկ տացես յաւանդ զոսկրոտին,
Ի յաշխարհ արգիական բառնալ տանել ընդ իւրեանս:
Փոխանակ քոյոց համբուն և քաղաքին արկածից՝
Ցերդմընի լինիջիր նախ. ըզնոյն երդնուլ է ըմբուն
Ադրաստեայ՝ որ իշխան և տէր է աստ բըռնակալ,
Բովանդակ Դանայեցւոց կըրել զերդումն է արժան:
Այս երդումն իցէ նոցա՝ զի մի՛ Արգեանց ինչ երբեք

Ի յերկիրս յարուցանել յայս ըղձամբար Թըշնամի ,
Եւ յայլոց լիցին արգել վառել 'ի զէն և 'ի զարդ ։
Թէ դաշինս այսմիկ դըրժեալ դըռոյթ յաշխարհըս դիցեն,
Դու զերկիր Արգիացւոց տուր բընաջինջ կորընչել ։ —
Ի նըմին ըսպանդ ինչ քեզ պարտ է հանել, լուր դու ինձ.
Յապարանս քոյ կայցէ եռոտանի պըղընձեայ ,
Զոր երբեմն յիլիոնի հիմն 'ի յարև տապալել՝
Ընդ կըրուկն դառնալ անդուստ ետ քեզ նըւէր Ալկիդէս ,
Ի սեղան՝ զոր դու ապա ձօնիս եդեր առ Պիւթեանն ։
Զերեցունց ապա դառանց ըզպարանոցս փողոտեալ՝
Ի խորուջ եռոտանւոյն այնմիկ զերդմունսըն գըրեա՛ ։
Ի պահեստ տուր աստուածոյն, որ ըզԴեղփիս խընամէ ,
Յիշատակ դաշանց ուխտի, վըկայութիւն Ելլադայ ։
Փողոտես այնու ըզսպանդս և ծայր 'ի ծայր յօշոտես ,
Ըզսուսերըն սըրածայր յերկրին 'ի խորշ մի ծածուկ՝
Առ եօթամբք խարուկօք ըսպանելոց Թաղեսջիր ։
Ի նոցա ահ և երկիւղ. Թէ այսր երբեք արշաւեն
Արհաւրօք և չարաքաստ դարձցին անդրէն առ իւրեանս ,
Զայսոսիկ քեզ արարեալ՝ յերկրէ արտաքս հան ըզդին.
Եւ յատակն՝ ուր մարմինք նոցա անկան մահացեալ՝
Սըրբեսցի հուրբ 'ի շաւիղս իսթմիական աստուածոյն ։ —
Ոգեցի զայս քեզ. արդ՝ Արգեանց մանկանցն ասացից. —
Քաջաբար վարեալ զաւանն Իսմենոսի յաղարտ դէք ,
Ըզհարցըն մեռելոց խընդրեալ վըրէժըս մահուն ։
Փոխանակ հօր քո և դու, Էգիալեւս, զօրավար
Նոր կացցես հօրամյն. որդի՝ եկեալ յԷտոլեանց՝
Տիդէւսի՝ զոր հայրն իսկ իւր Դիոմեդէս յորջորջեաց ։
Այն ինչ դեռ տեգք 'ի ծընօտս ծաղիկ մօրուացն արձակեալ՝
Ըզբանակ պըղընձասպար Դանայեցւոց խըմբեսջիր
Ի վերայ Կադմէացւոց եօթնապարիսպ դըղեկին ։
Անհնարին ածջիք նոցա մահ՝ զերդ կորեանց առիւծուց.
Ցեռնածինք կոչեսջիք դու 'նդ Ելլադաստան համօրէն,
Ի նըւագս առջիք երգոց յորոց ըզկնի ձեր գայցեն.
Օրինակ զայս աստուածովք լիջիք հըզօրք 'ի մարտի ։

ԹԵՍԵԻՍ

Պատգամացըդ մըտադիր անսամ, տիկին Աթենաս.
Դու յուղիղ արդեօք զիս ածես՝ զի մի Թիւրեցայց .



Յերդմընի կընքեմ արդ զայս , միայն՝ զի դու օգնեսցես.
Ի լինել մեզ 'ի Թիկունս՝ քաղաքս յամրի պահեսցի ։

ԳԱՐ

Երթիցուք օն, Ադրաստէ.
Ուխտի երդումն կընքեսցուք՝
Քաղաքիս և Թեսեւսի.
Զի իւրն փոխան վաստակոց՝
Է արժանի պաշտաման ։

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССРА

ՀՀ Ազգային գրադարան
NL0685861